




**Հայաստանում բարձր գյուղատնտեսական նշանակություն ունեցող մի շարք մշակաբույսերի և
դրանց վայրի ազգակիցների (ցեղակիցների) ընտրության և մշակության մեջ ներդնելու ուղեցույց**



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է «Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում» ծրագրի արդյունքների մի մասը: Գլխավոր Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):

Բովանդակություն

Հայաստանում բարձր գյուղատնտեսական նշանակություն ունեցող մի շարք մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների (ցեղակիցների)

ընտրության և մշակության մեջ ներդնելու ուղեցույց.....	7
Agaricaceae – Շամպինիոնազգիներ	8
Alliaceae – Սոխազգիներ	10
Alliaceae – Սոխազգիներ	12
Alliaceae – Սոխազգիներ	14
Amarantaceae – Հավակատարազգիներ	16
Apiaceae – Հովանոցազգիներ	18
Apiaceae – Հովանոցազգիներ	20
Apiaceae – Հովանոցազգիներ.....	22
Asparagaceae – Ծնեփակազգիներ	24
Asparagaceae – Ծնեփակազգիներ	26
Asparagaceae – Ծնեփակազգիներ	28
Asteraceae – Աստղազգիներ	30
Asteraceae – Աստղազգիներ	32
Asteraceae – Աստղազգիներ	34
Chenopodiaceae – Թելուկազգիներ	36
Chenopodiaceae – Թելուկազգիներ	38

Convallariaceae – Հովտաշուշանազգիներ	40
Convallariaceae – Հովտաշուշանազգիներ	42
Cornaceae – Հնազգիներ	44
Corylaceae – Տխլազգիներ.....	46
Cucurbitaceae – Դմազգիներ	48
Elaeagnaceae – Փշատազգիներ.....	50
Elaeagnaceae - Փշատազգիներ	52
Ericaceae – Հապալասազգիներ.....	54
Fabaceae – Բակլազգիներ	56
Fabaceae – Բակլազգիներ	58
Fabaceae - Բակլազգիներ.....	60
Fabaceae - Բակլազգիներ.....	62
Fabaceae - Բակլազգիներ.....	64
Grossulariaceae - Կոկոռազգիներ	66
Grossulariaceae - Կոկոռազգիներ	68
Grossulariaceae - Կոկոռազգիներ	70
Juglandaceae - Ընկուզազգիներ	72
Lamiaceae - Խուլեղինջազգիներ.....	74

Lamiaceae - Խուլեղինջազգիներ.....	76
Lamiaceae - Խուլեղինջազգիներ.....	78
Lamiaceae – Խուլեղինջազգիներ.....	80
Lamiaceae - Խուլեղինջազգիներ.....	82
Malvaceae - Փիփերթազգիներ.....	84
Malvaceae – Փիփերթազգիներ	86
Malvaceae - Փիփերթազգիներ.....	88
Moraceae - Թթազգիներ.....	90
Moraceae - Թթազգիներ.....	92
Poaceae - Հացազգիներ.....	94
Poaceae - Հացազգիներ.....	96
Poaceae - Հացազգիներ.....	98
Polygonaceae - Մատիտեղազգիներ.....	100
Polygonaceae - Մատիտեղազգիներ.....	102
Polygonaceae - Մատիտեղազգիներ.....	104
Rhamnaceae - Դժնիկազգիներ	106
Rosaceae - Վարդազգիներ.....	108
Rosaceae - Վարդազգիներ.....	110

Rosaceae - Վարդագգիներ.....	112
Rosaceae - Վարդագգիներ.....	114
Rosaceae - Վարդագգիներ.....	116
Rosaceae - Վարդագգիներ.....	118
Rosaceae - Վարդագգիներ.....	120
Rosaceae - Վարդագգիներ.....	122
Rosaceae - Վարդագգիներ.....	124
Rosaceae - Վարդագգիներ.....	126
Rosaceae - Վարդագգիներ.....	128
Rosaceae - Վարդագգիներ.....	130
Rosaceae - Վարդագգիներ.....	132
Rosaceae - Վարդագգիներ.....	134
Rosaceae - Վարդագգիներ.....	136
Urticaceae - Եղինջագգիներ	138
Actinidiaceae - Ակտինիդիագգիներ	140
Ebenaceae - Էբենագգիներ	142
Moraceae - Թթագգիներ.....	144
Oleaceae - Ձիթենագգիներ	146

Punicaceae - Նոնազգիներ	148
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	150

Հայաստանում բարձր գյուղատնտեսական նշանակություն ունեցող մի շարք մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների (ցեղակիցների) ընտրության և մշակության մեջ ներդնելու ուղեցույց

Գյուղական համայնքներում կարևոր նշանակություն ունի համապատասխան մշակաբույսերի ընտրությունը և մշակության մեջ ներդնելը: Գաղտնիք չէ, որ շատ դեպքերում հողը մշակողը շուկայում տեսնելով որևէ մշակաբույսի բարձր գինը, հաջորդ տարի ինքը նույնպես անցնում է այդ տեսակի մշակմանը: Նույն բանն անելով բազմաթիվ այլ մարդիկ, արդյունքում շուկան հեղեղում են այդ մշակաբույսով, բայց, արդեն բավականին ցածր արժեքով:

Մեր ուղեցույցի նպատակն է տալ այնպիսի մշակաբույսերի մասին տեղեկություններ, որոնք համեմատաբար քիչ են մշակվում, ունեն հաստատուն բարձր շուկայական արժեք, կամ ունեն բարձր սննդային, դեղագործական, վիտամինային արժեքներ, և կամ ունեն բարձր էկոլոգիական գրավչություն: Մեր կողմից ընտրված մշակաբույսերը, եթե ոչ շատ արագ, ապա հետագայում, կարող են բերել հաստատուն, բարձր և երկարատև եկամուտ: Ուղեցույցում առաջարկվում են նաև մշակաբույսերի որոշ վայրի ազգակիցներ՝ որպես հեռանկարային մշակաբույսեր, որոնք կարող են լայնորեն մշակվող մի շարք տեսակների համար գենետիկական նյութ ապահովող տեսակներ հանդիսանալ:

Ներկա աշխատանքում չեն ընդգրկվել հանրապետությունում լայնորեն շրջանացված մշակաբույսերը, օրինակ՝ կարտոֆիլը, ցորենը, կաղամբը, խնձորենին և այլն, որոնք, անհրաժեշտության դեպքում, հնարավոր է հետագայում ևս ամփոփել առանձին ուղեցույցում:

Ուղեցույցում մեր կողմից առաջարկվում են 71 տեսակ, սակայն դրանք չեն ընդգրկում բոլոր այն հեռանկարային տեսակները, որոնք կարելի է մշակել Հայաստանի Հանրապետությունում, սակայն վստահ ենք, որ գյուղատնտեսության հետագա զարգացումն անխուսափելիորեն կբերի նոր մշակաբույսերի կամ դրանց վայրի ազգակիցների մասին գրելու պահանջարկին:

Ուղեցույցում յուրաքանչյուր տեսակի համար բերվում են դրա գիտական (լատիներեն) անվանումը, հայերեն գրական և ժողովրդական անունները, բույսի նկարագրությունը, աճման համապատասխան վայրը, աշխարհագրական տարածումը, բույսի օգտագործումը, կենսաբանական ակտիվ նյութերը, բույսի հավաքվող մասերը և հավաքման ժամկետները, պաշարների վիճակը, վտանգվածությունը, պահպանության միջոցառումները, մշակության համապատասխան վայրը Հայաստանում, մշակման համառոտ տեխնոլոգիան, տեսակի ընտրության հիմնավորումը:

Բուսատեսակների մասին տեղեկությունները և անվանումները ճշտված են ըստ Հայաստանի ֆլորայի 11 հատորների (1954-2010), ԽՍՀՄ ֆլորայի 30 հատորների (1934-1960), Ս. Չերեպանովի ձեռնարկի (Черепанов, 1995), Ռ. Ղազարյանի բառարանի (1981) և այլն: Առանձին դեպքերում օգտվել ենք նաև ինտերնետային ռեսուրսներից:

Ընտանիք	Agaricaceae – Շամպինիոնազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Agaricus campestris</i> L. 
Գրական անվանումը	Շամպինիոն դաշտային
Ժողովրդական անվանումը	Ագարիկոն, աղարիկոն, թնոպի
Նկարագրությունը	Գլխարկը 8-15 սմ տրամագծով, սկզբից կիսագնդաձև, այնուհետև՝ հարթ կամ կլոր: Գույնը՝ սպիտակ, երբեմն դարչնագույն, չոր, թեփուկավոր մակերեսով, պտղամիսը՝ սպիտակ, թիթեղները՝ սկզբից սպիտակ, այնուհետև՝ բաց վարդագույն, ավելի ուշ՝ մուգ դարչնագույն, ոտիկը՝ 5-9 սմ բարձր., 1-2 սմ լայն., հարթ կամ հիմքում լայնացած, գլխիկի հետ՝ նույն գույնի, ոտիկի մեջտեղում՝ լայն, սպիտակ օղակով: Դաշտային շամպինիոնին նման է դեղնամաշկ շամպինիոնը, որը թունավոր է: Տարբերվում է դաշտային շամպինիոնից տիպիկ հոտով, ինչպես նաև գույնով՝ կտրելիս կամ ջարդելիս պտղամարմինը դեղնում է
Աճման վայրը	Խոտածածկ վայրերում, այգիներում, մարդու բնակավայրերին մոտիկ, հումուսով հարուստ հողերում
Տարածումը	Հայաստան, Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Աֆրիկա, Ավստրալիա, Նոր Զելանդիա, Հյուսիսային Ամերիկա: Այս տեսակի կուլտուրական ձևերը լայնորեն մշակվում են աշխարհում
Բույսի օգտագործումը	Մսնդային

Կենսաքանական ակտիվ նյութերը	Սպիտակուցներ (մարդու համար անհրաժեշտ համարյա բոլոր ամինաթթուները), ճարպեր, ածխաջրեր (քիչ քանակի), հանքային աղեր (մեծ քանակով ֆոսֆոր) և այլն: Ստանում են հակաբիոտիկներ
Բույսի հավաքվող մասերը	Գլխիկը և ոտիկը
Հավաքման ժամկետները	Բնության մեջ՝ մայիս –նոյեմբեր, մշակության մեջ՝ ողջ տարին
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ համեմատաբար հաստատուն են
Վտանգվածության աստիճանը	Վայրաճ ձևերը հավաքվում են բնակչության կողմից՝ օգտագործման և վաճառքի համար
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ է տալիս պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, արժեքավոր սնունդ
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Աճեցնում են բաց զրունտում, ջերմոցներում, նկուղներում կամ հատուկ կահավորված սենյակներում, որի դեպքում կլոր տարին ստանում են բարձր բերք
Տեսակի ընտրության հիմնավորումը	Աշխարհում լայնորեն մշակվող սնկատեսակներից է
Դիտողություններ	

Ընտանիք	Alliaceae – Սոխազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Allium porrum</i> L. 
Գրական անվանումը	Պրաս
Ժողովրդական անվանումը	Պրաս, պրասասոխ, սավզի, քուռաթ, քյավառ
Նկարագրությունը	Երկամյա սոխուկավոր, մինչև 5 սմ հաստ. խոտաբույս է՝ գծային, նշտարաձև տերևներով, մինչև 90 սմ բարձր. ծաղկալաքով, գնդաձև ծաղկաբույլով: Մերմերը սև են, անկյունավոր, անկանոն ձևի
Աճման վայրը	Հայաստանում՝ միայն մշակության մեջ
Տարածումը	Հայրենիքն առաջավոր Ասիան է, որտեղ մինչև հիմա աճում է նախնին՝ <i>Allium ampeloprasum</i> տեսակը: Հիմնականում մշակվում է Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանի երկրներում, Հյուսիսային Ամերիկայում
Բույսի օգտագործումը	Մսնդային և դեղագործական
Կենսաբանական ակտիվ նյութերը	Հարուստ է C վիտամինով, հանքային աղերով և յուրահատուկ բակտերիասպան հատկություն ունեցող էթերային նյութերով
Բույսի հավաքվող մասերը	Տերևների հաստացած հիմքերը, որոնք առաջացնում են հաստ կեղծ ցողուն

Հավաքման ժամկետները	Ամառ-աշուն
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Տարեցտարի ավելանում են բույսը մշակող տնտեսությունները
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Անհրաժեշտ է ավելացնել մշակվող տարածքները
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Ցրտասեր, խոնավասեր տեսակ է: Գերադասում է ենթակավային, գետահովտային, հումուսով հարուստ հողեր: Մշակությունը նման է սոխ սովորականի մշակությանը
Տեսակի ընտրության հիմնավորումը	Բնակչության կողմից սահմանափակ է մշակվում: Ունի սննդային բարձր արժեք և աստիճանաբար ընդունվում է բնակչության կողմից
Դիտողություններ	

Ընտանիք	Alliaceae – Սոխազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Allium schoenoprasum</i> L. 
Գրական անվանումը	Ճլուկասոխ
Ժողովրդական անվանումը	Սոխուկ
Նկարագրությունը	Բազմամյա, սոխուկավոր, կարճ կոճղարմատին մեկական կամ մի քանի՝ 0.75-1 սմ տրամագծով սոխուկներով, գլանաձև, սնամեջ, 1-2 տերևներով, 15-50 սմ բարձր.; հաճախ ճիմ առաջացնող բույս է: Սերմերը սև են, եռանկյունաձև
Աճման վայրը	Մերձալպյան և ալպյան մարգագետիններում, քարքարոտ վայրերում, ծ. մ. 2000-3700 մ բարձրություններում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Արագածի, Իջևանի, Ապարանի, Գեղամի, Դարալագեզի ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասի մեծ մասում, Եվրոպայում, Սիբիրում, Անատոլիայում, Իրանում, Կենտրոնական և Արևելյան Ասիայում, Հյուսիսային Ամերիկայում
Բույսի օգտագործումը	Մսնդային, դեղագործական և գեղազարդային
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (վիտամին A, C, B6, B12, D), ճարպեր, ածխաջրեր և սպիտակուցներ
Բույսի հավաքվող մասերը	Տերևները, սոխուկները, ծաղկաբույլերը

Հավաքման ժամկետները	Վաղ գարնանից մինչև օգոստոս
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ համեմատաբար հաստատուն են
Վտանգվածության աստիճանը	Բնակամիջավայրի կրճատում
Պահպանության միջոցառումները	Անհրաժեշտ է ավելացնել մշակվող տարածքները
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Լավ է աճում վառ լուսավորության պայմաններում: Գերադասում է թեթև, դրենաժային, հումուսով հարուստ հողեր: Մշակությունը ընդհանուր առմամբ նման է սոխ սովորականի մշակությանը
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային բարձր հատկություններին, Հայաստանում չի մշակվում
Դիտողություններ	Եվրոպայում մշակվում է 16-րդ դարից: Կան սեղանի մի քանի սորտեր: Միբիրում հավաքում և ձմեռվա համար աղ են դնում

Ընտանիք	Alliaceae – Սոխազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Allium victorialis</i> L. 
Գրական անվանումը	Սոխ հաղթության
Ժողովրդական անվանումը	Ղանձիլ
Նկարագրությունը	Բազմամյա, սոխուկավոր, կարճ, թեք կոճղարմատին մեկական կամ մի քանի, 1-2 սմ տրամագծով սոխուկներով, մինչև ցողունի 1/3-ը զրկող տերևափմբով, վերին մասում հարթ, 3-6 սմ լայն. 2-3 տերևներով, 30-70 (100) սմ բարձր. բույս է: Մերմերը սև են, գնդաձև
Աճման վայրը	Մերձալպյան մարգագետիններում, անտառի վերին գոտում, անտառներում, բացատներում, ծ. մ. 1700-2700 մ բարձրություններում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Իջևանի և Ապարանի ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասի մեծ մասում, Եվրոպայում, Միջինում, Հեռավոր Արևելքում, Հիմալայներում, Մոնղոլիայում, Ճապոնիայում
Բույսի օգտագործումը	Մսնդային և դեղագործական
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (վիտամին C) և սպիտակուցներ

Բույսի հավաքվող մասերը	Տերևները, սոխուկները, ծաղկաբույլերը
Հավաքման ժամկետները	Վաղ գարնանից մինչև հուլիս
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կրճատվում են
Վտանգվածության աստիճանը	Բնակամիջավայրի կրճատում
Պահպանության միջոցառումները	Անհրաժեշտ է ավելացնել մշակվող տարածքները
Մշակության համապատ. վայրը	Գեղարքունիքի մարզում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Լուսասեր, ցրտադիմացկուն տեսակ է: Գերադասում է թեթև, ավազային, կավաավազային, դրենաժային հողեր, մշակությունը ընդհանուր առմամբ նման է սոխ սովորականի մշակությանը
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային բարձր հատկություններին, Հայաստանում չի մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Amarantaceae – Հավակատաբազզիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Amarantus retroflexus L.</i> 
Գրական անվանումը	Հավակատար սովորական
Ժողովրդական անվանումը	Զիմել
Նկարագրությունը	Միամյա, միատուն խոտաբույս է՝ առանցքային արմատով, ուղիղ՝ մինչև 80 սմ բարձր. ցողունով, կլորավուն-ռոմբաձև, ամբողջաեզր տերևներով: Ծաղկաբույլերը հասկանման են, ծաղիկները՝ միասեռ: Պտուղը օվալաձև, թաղանթանման պարկ է, կլորավուն, հարթ սերմերով: Մեկ բույսի վրա առաջանում է մինչև 1 մլն սերմ
Աճման վայրը	Աճում է աղբոտ վայրերում և որպես մոլախոտ՝ ուշ գարնանացան, շարահերկ բույսերի ցանքերում, բանջարանոցներում, տնկարկներում և այլն
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Լոռու, Սևանի, Երևանի, Դարալագյազի ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասում, Միջերկրածովյան ավազանում, Եվրոպայում, Փոքր Ասիայում, Իրանում, Կենտրոնական Ասիայում, Սիբիրում, Մոնղոլիայում, Հեռավոր Արևելքում, Ամերիկայում
Բույսի օգտագործումը	Սննդային, կերային և գեղազարդային
Կենսաբանական ակտիվ	Վիտամիններ (A, B ₁ , B ₂ , C, E, PP), սպիտակուցներ, հանքային աղեր և այլն

նյութերը	
Բույսի հավաքվող մասերը	Մատղաշ տերևները, ընձյուղները և սերմերը՝ սննդի համար
Հավաքման ժամկետները	Մատղաշ տերևները և ընձյուղները վաղ գարնանից սկսած՝ մոտ երկու ամիս, սերմերը՝ ամռանը և աշնան սկզբին
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարներին վտանգ չի սպառնում
Վտանգվածության աստիճանը	Վտանգված չէ
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, արժեքավոր բանջարեղեն
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Լուսասեր, ջերմասեր, չորադիմացկուն տեսակ է: Պահանջկոտ չէ, գերադասում է ազոտով հարուստ ավազային, կավաավազային կամ կավային հողեր, կարող է աճել հիմնայինից մինչև թույլ թթու հողերում: Սերմերի մանրությունը և բազմաքանակությունը դյուրացնում է այս տեսակի մշակումը
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած արժեքավոր կերային հատկություններին և միավոր մակերեսում աճող բարձր կենսազանգվածին, ինչպես նաև սննդային ու գեղազարդային հատկություններին, բնակչության կողմից այս արժեքավոր տեսակը սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	Մասնագետներն այս տեսակը համարում են համաշխարհային հեռանկարային սննդային տեսակ

Ընտանիք	<i>Apiaceae - Հովանոցազգիներ</i>
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Chaerophyllum bulbosum</i> L.   
Գրական անվանումը	Շուշանբանջար սոխուկավոր
Ժողովրդական անվանումը	Մանդակ, ասող, դմի
Նկարագրությունը	Երկամյա, պալարաձև արմատով խոտաբույս, ցողունը՝ թույլ թավոտ, ճյուղավորված, մինչև 150 սմ բարձրությամբ: Հանգույցները տերևածոցերում՝ ուռած: Տերևները՝ եռակի փետրաձև, երբեմն թույլ թավոտ: Ծաղկաբույլերը 15-20 ճառագայթանի՝ ցողունների ծայրերին: Պտուղը՝ երկմաս, երկարավուն, սերմիկը՝ հնգակող: Բույսը առատ սերմնակալում է
Աճման վայրը	Անտառեզրերին, բացատներում, թփուտներում, խոտածածկ լանջերին, երբեմն աղբավայրերում և ցանքերում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Վերին Ախուրյանի, Լոռու, Իջևանի, Ապարանի, Սևանի, Երևանի, Դարալագեզի, Զանգեզուրի, Մեղրու ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասում, Եվրոպայում, Փոքր Ասիայում, Իրանում, Կենտրոնական Ասիայում
Բույսի օգտագործումը	Սննդային, մեղրատու և դեղագործական
Կենսաբանական ակտիվ	Վիտամիններ (C), ճարպեր, ալկալոիդ խերոֆոլին, ֆլավոնոիդներ, օսլա, եթերային յուղեր, աղաղանյութեր,

նյութերը	հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Գարնանային ընձյուղները, պալարաձև արմատները
Հավաքման ժամկետները	Վաղ գարնանից սկսած՝ մոտ երկու ամիս
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կարող են կրճատվել
Վտանգվածության աստիճանը	Ինտենսիվորեն հավաքվում է բնակչության կողմից օգտագործման և վաճառքի համար
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, արժեքավոր բանջարեղեն
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Խոնավասեր, ցրտադիմացկուն, ստվերատար տեսակ է: Հեշտ է բազմացվում, աճում է ցանկացած հողերի վրա, սերմերը ցանում են մարտից սկսած մինչև հունիսի կեսերը, տալիս է առատ ինքնացան
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային և, դեղագործական բարձր հատկություններին, բնակչության կողմից դեռևս սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Apiaceae – Հովանոցազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Chaerophyllum macrospermum</i> (Willd. ex Spreng.) Fisch. & C.A.Mey. ex Hohen. 
Գրական անվանումը	Շուշանբանջար խոշորապտուղ
Ժողովրդական անվանումը	Իծկոթ
Նկարագրությունը	Բազմամյա խոտաբույս է, ցողունը՝ թավոտ, պատված դեպի ներքև ուղղված մազիկներով, հիմքից ճյուղավորված, մինչև 80-100 սմ բարձր., տերևները՝ եռակի փետրաձև, երբեմն թույլ թավոտ: Ծաղկաբույլերը 5-10 ճառագայթանի՝ հովանոցիկների միայն կենտրոնական ծաղիկը՝ երկսեռ, մնացածները՝ արական: Պտուղը՝ երկմաս, համարյա գծային, 15-17 մմ երկարությամբ
Աճման վայրը	Լեռնային խոտածածկ լանջերին
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Ապարանի, Սևանի, Երևանի, Դարալագեզի, Զանգեզուրի, Մեղրու ֆլորիստիկ շրջաններում, Արցախում: Հայաստանից դուրս՝ Հարավային Կովկասում, Անատոլիայում, Իրանում, Լիբանանում, Լեռնային Թուրքմենստանում
Բույսի օգտագործումը	Սննդային, մեղատու և դեղագործական
Կենսաբանական ակտիվ	Վիտամիններ (C), եթերային յուղեր, հանքային աղեր և այլն

նյութերը	
Բույսի հավաքվող մասերը	Գարնանային ընձյուղները, սերմերը
Հավաքման ժամկետները	Վաղ գարնանից սկսած՝ մոտ երկու ամիս
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կարող են կրճատվել
Վտանգվածության աստիճանը	Ինտենսիվորեն հավաքվում է բնակչության կողմից օգտագործման և վաճառքի համար
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, արժեքավոր բանջարեղեն
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Խոնավասեր, ցրտադիմացկուն, ստվերատար տեսակ է: Աճում է ցանկացած հողերի վրա, սերմերը ցանում են մարտից սկսած մինչև հունիսի կեսերը, հարկավոր է ուշադրություն դարձնել սերմերի ծլունակությանը՝ ամենայն հավանականությամբ դրանք հարկավոր է ենթարկել ստրատիֆիկացիայի
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին, բնակչության կողմից սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Apiaceae - Հովանոցազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Falcaria vulgaris</i> Bernh. 
Գրական անվանումը	Միբեխ սովորական
Ժողովրդական անվանումը	Մուճուղես, մրճողես, կաթնաբերիկ, գոզի, դագի տոտիկ
Նկարագրությունը	Միամյա-երկամյա, առանցքային արմատով խոտաբույս է; ցողունը՝ մերկ, ուղիղ, 30-60 սմ բարձր., տերևները ամուր են, կոշտ, փետրաձև, սղոցաեզր, մերկ: Ծաղկաբույլերը 15-20 ճառագայթանի հովանոցներ են: Պտուղները թեթևակի կորացած են, երկարավուն, սերմերը մանր են, երկարավուն, թույլ կնճռոտ: Բույսը առատ սերմնակալում է
Աճման վայրը	Բաց չոր լանջերին, հաճախ դաշտերում ու ցանքերում որպես աղբաբույս
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Լոռու, Իջևանի, Շիրակի, Արագածի, Ապարանի, Սևանի, Երևանի, Դարալագեզի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկաս, Եվրոպա, Արևմտյան Հայաստան, Իրան, Արևմտյան Սիբիր, Կենտրոնական Ասիա
Բույսի օգտագործումը	Սննդային, կերային և դեղագործական
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (C), եթերային յուղեր, թաղանթանյութ, հանքային աղեր և այլն

Բույսի հավաքվող մասերը	Գարնանային երկամյա ընձյուղները
Հավաքման ժամկետները	Վաղ գարնանից սկսած՝ մոտ երկու-երեք ամիս
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարներին վտանգ չի սպառնում
Վտանգվածության աստիճանը	Ինտենսիվորեն հավաքվում է բնակչության կողմից օգտագործման և վաճառքի համար
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր բանջարեղեն
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Լուսասեր, չորադիմացկուն, լայն տարածված տեսակ է: Աճում է ցանկացած տիպի հողերի վրա: Մերմերը ցանվում են աշնանը նախորոք մշակված մարզերում կամ վաղ գարնանը
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին՝ բնակչության կողմից համարյա չի մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Asparagaceae – Ծնեփակազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Asparagus officinalis</i> L. 
Գրական անվանումը	Ծնեփակ դեղատու
Ժողովրդական անվանումը	Ծնեփուկ, ծներեկ, մարածո
Նկարագրությունը	Բազմամյա կոճղարմատավոր, երկտուն խոտաբույս; ցողունը՝ ուղիղ, 60-150 սմ բարձրությամբ; ճյուղերը՝ բազմաթիվ, բարակ, կլադոֆիտները՝ բարակ, նուրբ, մոտ 20 մմ երկարությամբ, տերևները՝ 4-7 մմ երկ., թաղանթավոր, եռանկյունի, խթանանման քրիկով, պտուղը՝ 5-7 մմ տրամագծով նարնջագույն-կարմիր հատապտուղ, սերմերը՝ երկուական
Աճման վայրը	Անտառեզրերին, թփուտներում, տափաստաններում, մարգագետիններում, կիրճերի լանջերին, ծ. մ. 600-2000 մ բարձրություններում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է բոլոր ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասի մեծ մասում, Իրանում, Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանում, Արևմտյան Սիբիրում, Կենտրոնական Ասիայում
Բույսի օգտագործումը	Սննդային և դեղագործական

Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (A, B1, B2, B3, B5, B6, B9, C, E, K), սպիտակուցներ, ածխաջրեր, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Գարնանային ընձյուղները՝ սննդի, արմատները, պտուղները՝ դեղագործական նպատակով
Հավաքման ժամկետները	Վաղ գարնանից սկսած՝ մոտ երկու ամիս
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կրճատվում են
Վտանգվածության աստիճանը	Ինտենսիվորեն հավաքվում է բնակչության կողմից օգտագործման և վաճառքի համար
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր բանջարեղեն
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Մշակվում է երկու եղանակով՝ սերմերը ցանվում են աշնանը նախորոք մշակված մարզերում, ինչպես նաև աճեցնում են սածիլներով: Լավ է աճում ավազակավային և ավազային հողերի վրա, համեմատաբար չորասեր է, լուսասեր և ջերմասեր, կարիք է զգում կանոնավոր ջրման, քաղհանի և փխրեցման
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած շուկայական մեծ պահանջարկին, սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին, բնակչության կողմից սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Asparagaceae – Ծնեփակազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Asparagus persicus</i> Baker 
Գրական անվանումը	Ծնեփակ պարսկական
Ժողովրդական անվանումը	Ծնեփուկ, ծնեբեկ, մարածո, մալածո, մարանձու
Նկարագրությունը	Կոճղարմատավոր, երկտուն թփիկ. ցողունը՝ բարձրացող, մինչև 100-150 սմ երկ., հիմքում թեթևակի փայտացած, կապտամոխրագույն փառով, ճյուղերը՝ փոված, ոլորված կամ անկյունավոր, կլադոֆիումները՝ զլանաձև, 2-4-ական, 15-25 մմ երկար., տերևները՝ սպիտակավուն, խթանանման սուր քթիկով, պտուղը՝ կարմիր գնդաձև հատապտուղ, սերմերը՝ 3-5-ական
Աճման վայրը	Կիսաանապատներում, տափաստաններում, չոր հողերում, ժայռերին, կիրճերում, ծ. մ. մինչև 1400 մ բարձրություններում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է շրջանների մեծ մասում: Հայաստանից դուրս՝ Կովկասում, Անատոլիայում, Իրանում, Աֆղանստանում, Եվրոպայի հարավ-արևելքում, Կենտրոնական Ասիայում
Բույսի օգտագործումը	Սննդային և դեղագործական
Կենսաբանական ակտիվ	Վիտամիններ (A, B ₁ , B ₂ , B ₃ , B ₅ , B ₆ , B ₉ , C, E, K), սպիտակուցներ, ածխաջրեր, հանքային աղեր և այլն

նյութերը	
Բույսի հավաքվող մասերը	Գարնանային ընձյուղները՝ սննդի, արմատները և պտուղները՝ դեղագործական նպատակով
Հավաքման ժամկետները	Վաղ գարնանից սկսած՝ մոտ երկու ամիս
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կրճատվում են
Վտանգվածության աստիճանը	Ինտենսիվորեն հավաքվում է բնակչության կողմից օգտագործման և վաճառքի համար, կրճատվում է բնակմիջավայրը
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր բանջարեղեն
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Մշակվում է երկու եղանակով՝ սերմերը ցանվում են աշնանը նախորոք մշակված մարզերում, ինչպես նաև մշակում են սածիլներով: Լավ է աճում ավազակավային և ավազային հողերի վրա, համեմատաբար չորասեր է, լուսասեր և ջերմասեր, կարիք է զգում կանոնավոր ջրման, քաղհանի և փխրեցման
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած շուկայական մեծ պահանջարկին, սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին, բնակչության կողմից չի մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Asparagaceae – Ծնեփակազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Asparagus verticillatus</i> L. 
Գրական անվանումը	Ծնեփակ օղակավոր
Ժողովրդական անվանումը	Ծնեփուկ, ծներեկ, մարածո, մալածոր, մարանձու
Նկարագրությունը	Լիանանման կոճղարմատավոր, երկտուն կիսաթփիկ. ցողունը՝ փաթաթվող, անկյունավոր, մինչև 150-250 սմ երկ., ճյուղերը՝ փայլուն, ակոսավոր, հաճախ կոճիկավոր-ատամնաեզր, կլադոդիումները՝ եռանիստ, բազմաթիվ, ճյուղերի հիմքում՝ օղակադիր, տերևները՝ թեփուկանման, կոշտ քթիկով, պտուղը՝ կարմիր, գնդաձև հատապտուղ, սերմերը՝ մեկական
Աճման վայրը	Գետահովիտներում, թփուտներում, քարքարոտ խոնավ վայրերում, անտառեզրերին, կիրճերում, ծ. մ. 700-2500 մ բարձրություններում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է բոլոր ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասի մեծ մասում, Անատոլիայում, Իրանում, Եվրոպայի հարավ-արևելքում, Ղրիմում, Միջերկրածովյան ավազանում, Սիբիրում
Բույսի օգտագործումը	Մսնդային և դեղագործական

Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (A, B1, B2, B3, B5, B6, B9, C, E, K), սպիտակուցներ, ածխաջրեր, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Գարնանային ընձյուղները՝ սննդի, արմատները և պտուղները՝ դեղագործական նպատակով
Հավաքման ժամկետները	Վաղ գարնանից սկսած՝ մոտ երկու ամիս
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կրճատվում են
Վտանգվածության աստիճանը	Ինտենսիվորեն հավաքվում է բնակչության կողմից օգտագործման և վաճառքի համար, կրճատվում է բնակմիջավայրը
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր բանջարեղեն
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Մշակվում է երկու եղանակով՝ սերմերը ցանվում են աշնանը նախորոք մշակված մարզերում, ինչպես նաև մշակում են սածիլներով: Լավ է աճում ավազակավային և ավազային հողերի վրա, համեմատաբար չորասեր է, ստվերատար և ջերմասեր, կարիք է զգում կանոնավոր ջրման, քաղհանի և փխրեցման
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած շուկայական մեծ պահանջարկին, սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին, բնակչության կողմից համարյա չի մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Asteraceae – Աստղազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Helianthus annuus</i> L. 
Գրական անվանումը	Արևածաղիկ միամյա
Ժողովրդական անվանումը	Արևերթիկ, արևելած ծաղիկ, արևլան
Նկարագրությունը	Միամյա, սովորաբար մեկ, խորդուբորդ մակերես ունեցող ցողունով, 50-300 սմ բարձր. խոտաբույս: Տերևները՝ մեծ, սրտաձև հիմքով և սրացած գագաթով, սղոցա-ատամնաեզր, զամբյուղը մինչև 50 սմ տրամագծով՝ կողքի թեքված կամ խոնարհված; ծաղիկները երկու տիպի՝ լեզվակավոր (ստերիլ) և խողովակավոր, սերմիկը հակառակ ձվաձև է կամ սեպաձև՝ փայտացած պատյանով
Աճման վայրը	Հայաստանում միայն մշակովի է
Տարածումը	Վայրի վիճակում հանդիպում է Մեքսիկայում և Լատինական Ամերիկայի այլ երկրներում
Բույսի օգտագործումը	Սննդային, դեղագործական, կերային, մեղրատու և տեխնիկական
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (B, E), սպիտակուցներ, ածխաջրեր, ճարպեր, օսլա, հանքային աղեր և այլն

Բույսի հավաքվող մասերը	Մերմերը՝ սննդի, ցողունը տերևներով՝ կերային (սիլոս), միայն ցողունը՝ վառելիք, ծաղիկները՝ դեղագործական նպատակներով
Հավաքման ժամկետները	Հիմնականում ուշ ամռանը կամ երբ արևածաղկի զամբյուղների 60-65 %-ը գորշանում է
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	-
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Անհրաժեշտ է ավելացնել մշակվող տարածքները
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Արևածաղիկը ոչ պահանջկոտ մշակաբույս է, սակայն բարձր բերքատվության համար պահանջում է պարարտ հողեր: Վատ է աճում աղակալած, թթու, ճահճային հողերում: Խորհուրդ չի տրվում աճեցնել մեկ տեղում մի քանի տարի անընդմեջ: Լուսասեր է, վատ է աճում քամոտ վայրերում
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած բնակչության կողմից սահմանափակ է մշակվում, ունի սննդային և տնտեսական մեծ նշանակություն և հսկայական պոտենցիալ
Դիտողություններ	

Ընտանիք	Asteraceae – Աստղազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Helianthus tuberosus</i> L.  
Գրական անվանումը	Արևածաղիկ պալարավոր
Ժողովրդական անվանումը	Գետնախնձոր, գետնատանձ
Նկարագրությունը	Բազմամյա, կոճղարմատավոր և պալարավոր, խորդուբորդ մակերես ունեցող ցողունով, 100-400 սմ բարձր. խոտաբույս; տերևները՝ սրտաձև հիմքով և սրացած զագաթով, սղոցա-ատամնաեզր, ցողունի վերին մասում՝ երկարավուն, ձգված, զամբյուղները 3-5 սմ տրամագծով՝ մի քանի հատ; ծաղիկները երկու տիպի՝ լեզվակավոր և խողովակավոր; սերմիկը՝ նեղ, սեպաձև: Պալարները երկարավուն են, անհավասար ու հաստ
Աճման վայրը	Հայաստանում միայն մշակովի է
Տարածումը	Վայրի վիճակում հանդիպում է Հյուսիսային Ամերիկայում
Բույսի օգտագործումը	Մսնդային և կերային
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (B ₁ , B ₃ , B ₅ , B ₆ , B ₉ /ֆոլիաթթու/, C, PP), ինուլին, սպիտակուցներ, ածխաջրեր, հանքային աղեր և այլն

Բույսի հավաքվող մասերը	Պալարները սննդի և կերային, վերգետնյա մասը՝ կերային նպատակներով
Հավաքման ժամկետները	Ուշ աշնանը կամ վաղ գարնանը
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	-
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Անհրաժեշտ է ավելացնել մշակվող տարածքները
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Մեկ տեղում կարելի է աճեցնել 10-12 տարի: Գետնախնձորը ոչ պահանջկոտ մշակաբույս է, սակայն բարձր բերքատվության համար պահանջում է պարարտ հողեր: Լուսասեր է, նախընտրում է չեզոք հողեր
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած բնակչության կողմից սահմանափակ է մշակվում, ունի սննդային և տնտեսական մեծ նշանակություն և հսկայական պոտենցիալ
Դիտողություններ	

Ընտանիք	Asteraceae – Աստղազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Tragopogon dubius</i> Scop. 
Գրական անվանումը	Մինձ կասկածելի
Ժողովրդական անվանումը	Այծեմորուս
Նկարագրությունը	Բազմամյա կոճղարմատավոր խոտաբույս; ցողունը՝ 30-70 սմ, երբեմն ավելի բարձր, տերևները ցողունի ներքևի մասում՝ երկար, նեղ, դեպի վեր աստիճանաբար կարճացող և սրվող, ծաղկակիցները երկարացած, զամբյուղի տակ՝ սնամեջ, զամբյուղները 5-6 սմ երկար., 2-2.5 սմ լայն., սերմերը քթիկի հետ միասին՝ 2-3 սմ երկարությամբ
Աճման վայրը	Անտառեզրերին, թփուտներում, կիրճերի լանջերին, միջին լեռնային գոտում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Սևանի, Երևանի և Զանգեզուրի ֆլորիստիկ շրջաններում, ինչպես նաև Արևմտյան Հայաստանում, Կենտրոնական, Արևելյան, Հարավային Եվրոպայում
Բույսի օգտագործումը	Մանդային (սալաթ, սուրճի սուռժգատ), գեղագարդային
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (B6, ֆոլիաթթու, C), սպիտակուցներ, ածխաջրեր, ճարպեր, թաղանթանյութ, ինուլին, տրագոպոնոլ, ֆլավոնոիդներ, կումարիններ, սրճային թթու, հանքային աղեր և այլն

Բույսի հավաքվող մասերը	Արմատները, երիտասարդ ընձյուղները՝ սննդի; հյուօրը՝ որպես մաստակ
Հավաքման ժամկետները	Արմատները՝ աշնանը կամ վաղ գարնանը; երիտասարդ ընձյուղները՝ գարնանը, հյուօրը՝ ամռանը
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կրճատվում են
Վտանգվածության աստիճանը	Բնակմիջավայրի կրճատում
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր բանջարեղեն
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Մինձը մշակում են որպես մեկ-երկամյա մշակաբույս: Պահանջկոտ չէ, երկար օրվա բույս է, ցրտադիմացկուն է: Ընդհանուր առմամբ, մշակությունը նման է գազարի աճեցման տեխնոլոգիային
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և գեղագարդային բարձր հատկություններին, բնակչության կողմից չի մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Chenopodiaceae – Թելուկազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Chenopodium album</i> L. 
Գրական անվանումը	Թելուկ սպիտակ
Ժողովրդական անվանումը	Շահսիպեղ
Նկարագրությունը	Միամյա, լավ զարգացած առանցքային արմատով խոտաբույս; ցողունը՝ խիստ ճյուղավորված՝ 10-200 սմ բարձր., տերևները կոթունավոր են, հավաքված խմբերով, որոնցում մեկ տերևը սովորաբար մեծ է, մյուսները՝ թերզարգացած, տերևաթիթեղի ստորին մակերեսը պատված է ալրանման փառով, ծաղիկները հավաքված են հուրաններում, սերմերը մանր են, կլոր, երկու կողմից սեղմված՝ գորշ, մինչև 10 հազ. հատ
Աճման վայրը	Ջրամբարների ափերին, ճանապարհների մոտ, ցանքերում, աղբավայրերում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Վերին Ախուրյանի, Լոռու, Իջևանի, Շիրակի, Ապարանի, Սևանի, Երևանի, Դարալագեզի և Զանգեզուրի ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ կոսմոպոլիտ է
Բույսի օգտագործումը	Սննդային և անասնակեր
Կենսաբանական ակտիվ	Վիտամիններ (A, B ₁ , B ₂ , C, E), ֆլավոնոիդներ, եթերային յուղեր, սապոնիններ, թրթնջկաթթու, հանքային աղեր և այլն

նյութերը	
Բույսի հավաքվող մասերը	Գարնանային ընձյուղները՝ սննդի, ամբողջ վերգետնյա մասը՝ կերային նպատակներով
Հավաքման ժամկետները	Վաղ գարնանից սկսած՝ երկու-երեք ամիս
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարներին վտանգ չի սպառնում
Վտանգվածության աստիճանը	Չնայած հավաքվում է բնակչության կողմից օգտագործման և վաճառքի համար, տեսակի պոպուլյացիաներին վտանգ չի սպառնում
Պահպանության միջոցառումները	Տեսակի մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ և արժեքավոր բանջարեղեն
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Ցրտադիմացկուն, լուսասեր և խոնավասեր տեսակ է, լավ է աճում աղակալած հողերում, որը կարելի է օգտագործել հողը աղերից մաքրելու նպատակով: Լավ արդյունք է տալիս աշնանային ցանքի դեպքում
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին, բնակչության կողմից չի մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Chenopodiaceae – Թելուկազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Spinacia tetrandra</i> Steven ex M. Bieb. 
Գրական անվանումը	Սպանախ քառառեջ
Ժողովրդական անվանումը	Ծմել, շումին
Նկարագրությունը	Միամյա, երկտուն խոտաբույս; ցողունը՝ ուղիղ, մեկական կամ խմբված, 10-40 սմ բարձր., տերևները՝ վարդակավոր և ցողունային, արական առանձնյակների վրա ցողունային տերևները կտրտված են, կոթուններով, իգական առանձնյակների վրա՝ ամբողջաեզր և նստադիր, ծաղիկները խմբված են գլխիկների մեջ, պտղաբույլերը եղջերավոր են, նստած են և՛ ցողունների, և՛ տերևավարդակների տերևածոցերում, հասունանալիս ցողունային տերևածոցերում նստած պտուղներն ընկնում են տերևների հետ միասին
Աճման վայրը	Քարքարոտ լանջերին, նախալեռնային և կիսաանապատային գոտիներում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Երևանի, Դարալագեզի և Մեղրու ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Հարավային և Արևելյան Կովկասում, Իրանում
Բույսի օգտագործումը	Սննդային

Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (A, B1, B2, C), սպիտակուցներ, ածխաջրեր, ճարպեր, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Վաղ գարնանային ընձյուղները
Հավաքման ժամկետները	Վաղ գարնանից սկսած՝ մոտ երկու ամիս
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կրճատվում են
Վտանգվածության աստիճանը	Ինտենսիվորեն հավաքվում է բնակչության կողմից օգտագործման և վաճառքի համար, կրճատվում են աճելավայրերը գյուղատնտեսական հանդակների առաջխաղացման հետևանքով
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ և արժեքավոր բանջարեղեն
Մշակության համապատ. վայրը	Արարատի մարզում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Երկար օրվա, լուսասեր, երկտուն բույս է: Լավ է աճում աշնանային կամ վաղ գարնանային ցանքի դեպքում, վատ է տանում քամոտ տեղամասերը, քանի, որ ունի թույլ զարգացած արմատային համակարգ: Մերմերը պահանջում են ստրարիֆիկացիա
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին՝ բնակչության կողմից չի մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Convallariaceae – Հովտաշուշանազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Polygonatum verticillatum</i> (L.) All. 
Գրական անվանումը	Մինդրիկ օղակավոր
Ժողովրդական անվանումը	Կցմծուկ, սամստրուկ, սանդրուկ, սնդրիկ, սնդրուկ, Սողոմոնի կնիք, քրմնցուկ
Նկարագրությունը	Բազմամյա կոճղարմատավոր. ցողունը՝ կորացած, 30-60 սմ բարձրությամբ, տերևները ցողունի ստորին մասում հերթադիր են, վերին մասերում՝ օղակադիր, նշտարաձև կամ նեղ նշտարաձև, ծաղիկները 2-3-ական կախված են տերևածոցերից դուրս եկող ծաղկառտիկներից, պտուղները մանուշակագույն-կարմիր, 6-9 մմ տրամագծով հատապտուղներ են
Աճման վայրը	Միջին և վերին լեռնային գոտիներում, խիտ անտառներում, հաճախ անտառի վերին գոտում, ծ. մ. 1500-2300 մ բարձրություններում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Իջևանի, Ապարանի, Սևանի, Երևանի և Զանգեզուրի ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասում, Արևմտյան Հայաստանում, Եվրոպայում, Աֆղանստանում, Պակիստանում,

	Հիմնալայներում, Չինաստանում, Ճապոնիայում
Բույսի օգտագործումը	Մանդային և դեղագործական
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամին C, սպիտակուցներ, ածխաջրեր (օսլա), տանիններ, ալկալոիդներ, սապոնիններ, բուսական լորձ, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Գարնանային ընձյուղները սննդի նպատակով
Հավաքման ժամկետները	Վաղ գարնանից սկսած՝ մոտ երկու ամիս
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կրճատվում են:
Վտանգվածության աստիճանը	Ինտենսիվորեն հավաքվում է բնակչության կողմից օգտագործման և վաճառքի համար:
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր բանջարեղեն
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Մովերասեր, խոնավասեր, ոչ պահանջկոտ բույս է, նախընտրում է պարարտ հողեր: Բազմաճյուղ է և սերմերով, և վեգետատիվ մեթոդով: Սերմերը ցանում են աշնանը, առաջին տերևները երևում են երկրորդ տարին, որի պատճառով նախընտրելի է կոճղարմատներով բազմացման եղանակը: Կոճղարմատները հեշտությամբ են կիսվում հանգույցների տեղում, տնկվում են օգոստոսին, կամ վաղ գարնանը
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին, բնակչության կողմից չի մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Convallariaceae – Հովտաշուշանազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Polygonatum orientale</i> Desf. 
Գրական անվանումը	Մինդրիկ արևելյան
Ժողովրդական անվանումը	Կցմծուկ, սամստրուկ, սանդրուկ, սնդրիկ, սնդրուկ, Սողոմոնի կնիք, քրմնցուկ
Նկարագրությունը	Բազմամյա կոճղարմատավոր. ցողունը՝ կորացած, 30-70 սմ բարձրությամբ, տերևները հերթադիր են՝ նեղ նշտարաձև, երկարավուն կամ օվալաձև, ծաղիկները 2-5-ական կախված են տերևածոցերից դուրս եկող ծաղկառտիկներից, պտուղները մուգ կապույտ կամ համարյա սև, փառապատ, 7-12 մմ տրամագծով հատապտուղներ են
Աճման վայրը	Միջին և ստորին լեռնային գոտիներում, անտառներում և թփուտներում, ծ. մ. 1000-1400 մ բարձրություններում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Լոռու, Իջևանի, Շիրակի, Արագածի, Ապարանի, Սևանի Երևանի, Դարալագեզի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասի մեծ մասում, Արևելյան Միջերկրածովյան ավազանում, Փոքր Ասիայում
Բույսի օգտագործումը	Մսնդային և դեղագործական

Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամին C, սպիտակուցներ, ածխաջրեր, տանիններ, ալկալոիդներ, սապոնիններ, բուսական լորձ, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Գարնանային ընձյուղները՝ սննդի նպատակով
Հավաքման ժամկետները	Վաղ գարնանից սկսած՝ մոտ երկու ամիս
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կրճատվում են
Վտանգվածության աստիճանը	Ինտենսիվորեն հավաքվում է բնակչության կողմից օգտագործման և վաճառքի համար
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր բանջարեղեն
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Սովերասեր, խոնավասեր, ոչ պահանջկոտ բույս է, նախընտրում է պարարտ հողեր: Բազմաճյուղ է և սերմերով, և վեգետատիվ մեթոդով: Սերմերը ցանում են աշնանը, առաջին տերևները երևում են երկրորդ տարին, որի պատճառով նախընտրելի է կոճղարմատներով բազմացման եղանակը: Կոճղարմատները հեշտությամբ են կիսվում հանգույցների տեղում, տնկվում են օգոստոսին, կամ վաղ գարնանը
Տեսակի ընտրության հիմնավորումը	Զնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին՝ բնակչության կողմից չի մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Cornaceae – Հոնազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Cornus mas</i> L. 
Գրական անվանումը	Հոն սովորական
Ժողովրդական անվանումը	Հուն, գողալենի, կռի, չուն
Նկարագրությունը	Տերևաթափ փոքր ծառ կամ թուփ. 5-6 մ բարձր., ճյուղերը փոված են, տերևները հակադիր են, պարզ, ամբողջաեզր, օվալաձև, 3.5-8 սմ երկար., 2-5 զույգ երկրորդնային ջղերով, ծաղիկները մանր են, երկսեռ, հավաքված հովանոց ծաղկաբույլերով, ծաղկում են վաղ գարնանը, մինչև տերևների բացվելը, պտուղը հյութալի կորիզապտուղ է, օվալաձև, քաղցրաթթվաշ, բաց կարմիր, կարմիր, համարյա սև-մանուշակագույն
Աճման վայրը	Ստորին լեռնային գոտում, անտառեզրերին, անտառի երկրորդ հարկում, ծ. մ. մինչև 1000 մ բարձրություններում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Լոռու, Իջևանի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասի բոլոր շրջաններում, Միջին և Հարավային Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանում, Փոքր Ասիայում
Բույսի օգտագործումը	Սննդային, դեղագործական, մեղրատու, տեխնիկական, գեղազարդային
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամին C, սալիտակուցներ, ածխաջրեր, օրգանական թթուներ (լիմոնային, խնձորային), ֆլավոնոիդներ, եթերայուղեր, ֆիտոնցիդներ, աղաղանյութեր, հանքային աղեր և այլն

Բույսի հավաքվող մասերը	Պտուղները
Հավաքման ժամկետները	Սեպտեմբեր-հոկտեմբեր
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կարող են կրճատվել բնակմիջավայրի կորստի պատճառով
Վտանգվածության աստիճանը	Ինտենսիվորեն հավաքվում է բնակչության կողմից՝ օգտագործման և վաճառքի համար
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել դիետիկ, բուժիչ, արժեքավոր միրգ
Մշակության համապատ. վայրը	Արարատի մարզում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Հոնենին բազմացվում է սերմերով, արմատային մացառներով, կտրոններով կամ պատվաստով: Սովերատար, ջերմասեր բույս է, վատ է տանում թթու հողերը: Տնկիների հեռավորությունը արդյունաբերական այգում կախված է հողի բերրիության աստիճանից, սակայն նախընտրելի է 5x4 մ սխեման, որի դեպքում մեկ հեկտարի համար կպահանջվի 500 տնկի
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին՝ ֆերմերների կողմից արդյունաբերական մասշտաբներով չի մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Corylaceae – Տխլազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Corylus avellana</i> L. 
Գրական անվանումը	Տխլենի սովորական
Ժողովրդական անվանումը	Տկողին, տխիլ, պնդուկենի, տիգենի
Նկարագրությունը	Տերևաթափ, միատուն, 2-5, երբեմն մինչև 7 մ բարձր. թուփ է, արմատները սկզբից աճում են ուղղահայաց ներքև, այնուհետև տարածվում են դեպի կողքերը, տերևները պարզ են, կլորավուն կամ օվալ, հիմքում անհավասարակողմ սրտաձև, սրածայր, անկանոն կրկնակի ատամնաեզր, արական ծաղիկները մինչև 5 սմ երկար. կատվիկներ են, պտուղները խմբված են 1-5-ական, ընկույզը՝ համարյա օվալաձև կամ գնդաձև
Աճման վայրը	Ստորին և միջին լեռնային գոտիներում, անտառեզրերին, անտառի երկրորդ հարկում, կիրճերի լանջերին, թփուտներում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Իջևանի և Զանգեզուրի ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասի անտառային շրջաններում, Եվրոպայում, Ղրիմում, Արևմտյան Ասիայում
Բույսի օգտագործումը	Մանդային, կերային, տեխնիկական, գրունտի ամրացման համար, գեղազարդային

Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (B, E), սպիտակուցներ, ածխաջրեր, ճարպեր, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Ընկույզները սննդի, ճյուղերը՝ անասնակերի համար, կեղևը՝ աղադանյութեր և ներկանյութ ստանալու համար, բնափայտը՝ տեխնիկական նպատակներով
Հավաքման ժամկետները	Ընկույզները՝ սեպտեմբեր- հոկտեմբերին
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կարող են կրճատվել բնակմիջավայրի կորստի պատճառով
Վտանգվածության աստիճանը	Ինտենսիվորեն հավաքվում է բնակչության կողմից՝ օգտագործման և վաճառքի համար
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել դիետիկ, բուժիչ, արժեքավոր պտուղ
Մշակության համապատ. վայրը	Արարատի մարզում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Տիլենին բազմացվում է սերմերով, արմատային մացառներով, կտրոններով (լավագույն սորտերի համար ցանկալի է միկրոկլոնային եղանակով) կամ պատվաստով: Սովերատար, ջերմասեր բույս է; ի տարբերություն շատ այլ տեսակների, հարմար է աճեցնել լեռնալանջերին, քանի, որ արմատները պահպանում են հողը էռոզիայից: Արդյունաբերական այգիներում տնկիների հեռավորության համար նախընտրելի է 5x4 մ սխեման, որի դեպքում մեկ հեկտարի համար կպահանջվի 500 տնկի
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին՝ ֆերմերների կողմից արդյունաբերական մասշտաբներով չի մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Cucurbitaceae – Դդմազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Cucurbita pepo</i> L. 
Գրական անվանումը	Դդում
Ժողովրդական անվանումը	Դդմենի, կարկաժ, կոշ, շշուկ
Նկարագրությունը	Միամյա խոտաբույս. արմատը առանցքային, ճյուղավորված, ցողունը 5-8 մ երկարությամբ; տերևները՝ խոշոր, հնգաբլթակ, կլորավուն, խորը կտրտված բլթակներով, ծաղկակոթը՝ պրիզմայաձև, ծաղիկը՝ խոշոր, դեղին, պտուղը՝ խոշոր, հարթ մաշկով, մսալի պտղամսով դդում է, օվալաձև կամ գնդաձև
Աճման վայրը	Հայաստանում լայնորեն մշակվում է
Տարածումը	Վայրի վիճակում հանդիպում է Հյուսիսային Ամերիկայում
Բույսի օգտագործումը	Մսնդային, դեղագործական և մեղրատու
Կենսաբանական ակտիվ նյութերը	Պտղամսի մեջ՝ վիտամիններ (B1, B2, B5, C, E, կարոտին), ածխաջրեր, օրգանական թթուներ, սերմերում՝ վիտամիններ (C, B), կարոտինոիդներ, ճարպեր, օրգանական թթուներ, էթերայուղեր, խեժանյութեր, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները

Հավաքման ժամկետները	Աշնանը՝ մինչև ցրտահարությունների սկսվելը
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	-
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա բնակչությանը մատակարարել դիետիկ, բուժիչ, արժեքավոր սննդամթերք
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Պահանջկոտ է հողի բերրիության նկատմամբ, լավ է աճում կավաավազային հողերում, ծլում է 12 C° պայմաններում, աշնանը հողը պետք է պարարտացնել գոմաղբով, գարնանը՝ հանքային պարարտանյութերով: Ջրովի հողերում բույսն աճեցնում են թմբերի վրա, ծլելուց հետո կատարում են նոսրացում, քաղհան, փխրեցում, ձերատում (բույսի վրա թողնում են 3-4 պտուղ)
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին՝ ֆերմերների կողմից արդյունաբերական մասշտաբներով չի մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Elaeagnaceae – Փշատազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Elaeagnus angustifolia</i> L. 
Գրական անվանումը	Փշատենի նեղատերև
Ժողովրդական անվանումը	Մոլաձիթենի
Նկարագրությունը	Տերևաթափ, մինչև 7 մ բարձր. թուփ կամ ծառ է. տերևները պարզ են, հերթադիր, ամբողջաեզր, երկարավուն, օվալաձև կամ նեղ ձվաձև, վերևից՝ արծաթագույն-կանաչավուն, ներքևից՝ արծաթագույն, ծաղիկները մինչև 1 սմ տրամագծով, դեղին-արծաթավուն, խիստ հոտավետ, պտուղը 1-3 սմ երկար. օվալաձև կորիզապտուղ է, քաղցր-ալրային պտղամսով
Աճման վայրը	Ստորին և միջին լեռնային գոտիներում, ավազային, ավազակավային, աղակալած հողերում, հիմնականում ջրամբարների, գետերի, առուների ափերին
Տարածումը	Հայաստանում հանդիպում է բոլոր ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասում, Հարավային Եվրոպայից մինչև Կենտրոնական Ասիա, Հիմալայներ և Ալթայ

Բույսի օգտագործումը	Մսնդային, դեղագործական, մեղրատու և գեղագարդային
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ, սպիտակուցներ, ածխաջրեր, աղադանյութեր, օրգանական թթուներ, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները
Հավաքման ժամկետները	Օգոստոս-նոյեմբեր
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կարող են կրճատվել
Վտանգվածության աստիճանը	Նկատվում է բնակմիջավայրի կրճատում
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա հնագույն սորտերն ու վայրի պոպուլյացիաները մշակության մեջ և բնակչությանը մատակարարել դիետիկ, բուժիչ, արժեքավոր միրգ
Մշակության համապատ. վայրը	Արարատի մարզում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Լուսասեր, երաշտադիմացկուն, ջերմակայուն, ցրտադիմացկուն, արագաճ, երկարակյաց բույս է: Վնասատուներով և հիվանդություններով քիչ է վարակվում, քաղաքային պայմաններում լավ է դիմանում ծիւին, մրին և գազերին: Աճում է աղքատ, աղակալած հողերում, ի շնորհիվ արմատների վրա ապրող ազոտֆիքսող բակտերիաների: Բազմանում է սերմերով, կտրոններով, արդյունաբերական այգիներում տնկիների հեռավորության համար նախընտրելի է 3x3 մ սխեման
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային և դեղագործական բարձր հատկություններին՝ բնակչության կողմից սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Elaeagnaceae - Փշատազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Hippophaë rhamnoides</i> L.  
Գրական անվանումը	Չիչխան դժնիկանման
Ժողովրդական անվանումը	Փշարմավ, ափռի, ծովափուշ, ձիափշատ, ձիափուշ, ձորի փուշ
Նկարագրությունը	Տերևաթափ, երկտուն, մինչև 6 (10) մ բարձր. թուփ է, կամ փոքր ծառ՝ գորշ, փշոտ ճյուղերով: Տերևները պարզ են, գծային-նշտարաձև, վերնից՝ կանաչ, արծաթավուն, ներքևից՝ սպիտակ, գորշ՝ ծածկված թեփուկանման մազիկներով: Առեջային ծաղիկները կարճ հասկերով խմբված, վարսանդայինները՝ տերևածոցերում, մեկական: Կորիզապտուղները՝ օվալ, դեղնավուն, հյութալի, դեղին, յուրահատուկ հոտով
Աճման վայրը	Ստորին և միջին լեռնային գոտիներում, ավազային, ավազակավային, աղակալած հողերում, հիմնականում ջրամբարների, գետերի, առուների ափերին
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Վերին Ախուրյանի, Իջևանի, Ապարանի, Սևանի Երևանի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասի մեծ մասում, Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանում, Փոքր Ասիայում, Իրանում, Աֆղանստանում, Սիբիրում, Կենտրոնական Ասիայում, Հյուսիս-Արևմտյան Հիմալայներում

Բույսի օգտագործումը	Մսնդային, դեղագործական, էռոզապաշտպան, գեղագարդային, ներկատու և մեղրատու
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (A, B, C, E), սպիտակուցներ, ածխաջրեր, օրգանական թթուներ, աղադանյութեր, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները
Հավաքման ժամկետները	Օգոստոս-հոկտեմբեր
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարներին վտանգ չի սպառնում
Վտանգվածության աստիճանը	Հավաքվում է բնակչության կողմից օգտագործման և վաճառքի համար
Պահպանության միջոցառումները	Տեսակի պոպուլյացիաներին վտանգ չի սպառնում
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Լուսասեր, երկտուն, ցրտադիմացկուն բույս է: Լավ է աճում ավազային և ավազակավային հողերում: Ի շնորհիվ արմատների վրա ապրող ազոտֆիքսող բակտերիաների, կարող է յուրացնել սննդանյութերով աղքատ հողերը: Պտուղները հիմնականում հավաքվում են ճյուղերի կտրման եղանակով (աշխարհում տարածված մեթոդ է)
Տեսակի ընտրության հիմնավորումը	Տեսակի պաշարների արդյունաբերական մասշտաբներով մշակումը կարիք ունի այս արժեքավոր բույսի նոր, բարձրարժեք սորտերի ներդրմանը
Դիտողություններ	

Ընտանիք	Ericaceae – Հապալասագգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Vaccinium myrtillus</i> L. 
Գրական անվանումը	Հապալասի մրտենական
Ժողովրդական անվանումը	Ղողնոշ
Նկարագրությունը	Տերևաթափ, 15-40 (50) սմ բարձր. կիսաթուփ է՝ քառանկյուն, վառ կանաչ, մերկ ճյուղերով: Տերևները պարզ են, ձվաձև, էլիպսաձև, 1-3 սմ երկ., ծաղիկները միայնակ են, դեպի ցած հակված, պտուղը գնդաձև, էլիպսաձև, երբեմն՝ լայն ձվաձև, 6-8 մմ տրամագծով, սև, կապույտ խավով քաղցր հատապտուղ է
Աճման վայրը	Մերձալպյան և ալպյան գոտիներում, ծ. մ. 2800-3200 մ բարձրություններում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Իջևանի և Սևանի ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասում, Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանում, Անատոլիայում, Կենտրոնական Ասիայում, Հյուսիսային Ամերիկայում
Բույսի օգտագործումը	Սննդային, մեղրատու և դեղագործական
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (A, B, C), սպիտակուցներ, ածխաջրեր, աղաղանյութեր, օրգանական թթուներ, ֆլավոնոիդներ, հանքային աղեր և այլն

Բույսի հավաքվող մասերը	Պտուղները
Հավաքման ժամկետները	Հուլիս-սեպտեմբեր
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կրճատվում են
Վտանգվածության աստիճանը	Նկատվում է բնակմիջավայրի կրճատում
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր հատապտուղ
Մշակության համապատ. վայրը	Գեղարքունիքի մարզում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Հապալասենին ստվերասեր, խոնավասեր, թուփ է, լավ է աճում բարձր գրունտային ջրերի առկայությամբ և թթու հողերում: Տնկիների համար հարկավոր է նախորոք փորված փոսերում պատրաստել հողախառնուրդ, որին թթվայնություն հաղորդելու համար հարկավոր է ավելացնել տորֆ, ծծմբաթթու, կաղնու տերևներ և այլն: Բազմացնում են հապալասենի մրտենանմանը սերմերով կան թփի կիսումով
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին, բնակչության կողմից սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Fabaceae – Բակլազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Cicer arietinum</i> L.  
Գրական անվանումը	Միսեռ մշակովի
Ժողովրդական անվանումը	Ոչխարի ոլոռ, պուտուտակ, կորմ
Նկարագրությունը	Միամյա, կարճ գեղձավոր-թավոտ խոտաբույս; ցողունը՝ ուղիղ, 12-80 սմ բարձր., վերին մասում ճյուղավորված, տերևները՝ բարդ, կենտ-փետրաձև, 2,5-7 սմ երկ., ծաղիկները՝ մեկական, սպիտակ, վարդագույն կամ կապույտ-մանուշակագույն, ունդերը 2-3.5 սմ երկ., սերմերը՝ բազմագույն, հարթ կամ կնճռոտ, 0.5-1.4 սմ երկ., կարճ քթիկով
Աճման վայրը	Հայաստանում միայն մշակովի է
Տարածումը	Մշակվում է Դարալագեզի ֆլորիստիկ շրջանում: Հայաստանից դուրս լայնորեն մշակվում է Հյուսիսային Կիսագնդի միջին լայնություններում
Բույսի օգտագործումը	Մսնդային
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (B1, B2), սպիտակուցներ, ածխաջրեր, ճարպեր, օրգանական թթուներ, հանքային աղեր և այլն

Բույսի հավաքվող մասերը	Մերմերը
Հավաքման ժամկետները	Հուլիս-օգոստոս
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	-----
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Անհրաժեշտ է ավելացնել մշակվող տարածքները
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Միամյա, ցրտադիմացկուն, երկար օրվա մշակաբույս է: Արմատների վրա առաջանում են ազոտֆիքսող բակտերիաներ: Ցանկալի է սիսեռի ցանքը մեկընդմեջ փոխել աշնանացան ցորենի ցանքերով, որը ապահովում է ցորենի համար բարձր բերքատվություն, իսկ սիսեռի համար մոլախոտերի պակաս աճ (հատկապես բազմամյա կոճղարմատավոր մոլախոտերի առկայության դեպքում)
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային և տնտեսական բարձր հատկություններին՝ բնակչության կողմից սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	Տեսակը վայրի վիճակում հայտնի չէ, մշակվում է ամբողջ աշխարհում (ՄՍՀՄ Ֆլորա-13 հատոր, 338 էջ)

Ընտանիք	Fabaceae – Բակլազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Glycyrrhiza glabra L.</i>  
Գրական անվանումը	Մատուտակ մերկ
Ժողովրդական անվանումը	Քաղցրարմատ, քաղցր բիյան
Նկարագրությունը	Բազմամյա, հզոր արմատային համակարգով խոտաբույս; ցողունը՝ ուղիղ, խիստ ճյուղավորվող, 100-150 սմ բարձր., տերևները՝ զույգ-փետրաձև, 5-20 սմ երկար., տերևիկները՝ ձվաձև, ծաղկաբույլը՝ ողկույզ, պտուղը՝ դեղնադարչնագույն ունդ, սերմերը՝ անկանոն-գնդաձև, կանաչավուն
Աճման վայրը	Հարթավայրերում և նախալեռներում՝ գետերի ափերին, ոռոգման ջրանցքների երկարությամբ, աղուտներում, ցանքսերում և այգիներում՝ որպես աղբաբույս
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Շիրակի, Երևանի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասում, Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանում, Փոքր Ասիայում, Իրանում, Արևմտյան Սիբիրում, Կենտրոնական Ասիայում
Բույսի օգտագործումը	Մանդային, դեղագործական և տեխնիկական

Կենսաբանական ակտիվ նյութերը	Մպիտակուցներ, ածխաջրեր (օսլա, ցելյուլոզա), լորձնային նյութեր, սապոնիններ, օրգանական թթուներ, եթերային յուղեր, աղաղանյութեր, ֆլավոնոիդներ, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Արմատները
Հավաքման ժամկետները	Մարտ-ապրիլ ամիսներին կամ ուշ աշնանը
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կրճատվում են
Վտանգվածության աստիճանը	Նկատվում է բնակմիջավայրի կրճատում, հատկապես դրենաժային առուների չորացման և շարքից դուրս գալու հետ
Պահպանության միջոցառումները	Տեսակի մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել դիետիկ, բուժիչ, արժեքավոր մշակաբույս
Մշակության համապատ. վայրը	Արարատի մարզում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Այս, համաշխարհային մեծ պահանջարկ ունեցող բույսը նախընտրում է պարարտ, բավարար խոնավ, հողեր: Լուսասեր է, չորադիմացկուն, ցրտադիմացկուն և աղադիմացկուն: Բազմացվում է սերմերով և արմատային ու կոճղարմատային կտորներով: Սերմերով աճեցման դեպքում արմատների բերքը հավաքվում է 5-6 տարի, իսկ վեգետատիվ բազմացման դեպքում՝ 3-4 տարի հետո
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին՝ բնակչության կողմից չի մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Fabaceae - Բակլազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Lens culinaris</i> Medik. 
Գրական անվանումը	Ոսպ ուտվող
Ժողովրդական անվանումը	Ռուփին, ռուփեն
Նկարագրությունը	Միամյա, թավոտ խոտաբույս; ցողունը՝ ուղիղ, քիչ ճյուղավորված, 15-75 սմ բարձր., տերևները՝ զույգ փետրաձև, ավարտվում են բեղիկով, ծաղիկները մանր են, հավաքված 1-4-ական փնջերում, ունդերը կախված են, մոտ 1 սմ երկար., սերմերը՝ 1-3-ական, տափակ
Աճման վայրը	Հայաստանում՝ մշակության մեջ
Տարածումը	Մշակվում է ամենուրեք
Բույսի օգտագործումը	Սննդային, դեղագործական և կերային
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (B1, B2), սպիտակուցներ, ածխաջրեր (օսլա), ճարպեր, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Սերմերը
Հավաքման ժամկետները	Օգոստոս-սեպտեմբեր

Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	-
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա հնադարյան սորտերը մշակության մեջ և բնակչությանը մատակարարել դիետիկ, բուժիչ, արժեքավոր հատիկաբույսեր
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Զորադիմացկուն, ցրտադիմացկուն մշակաբույս է: Մշակումը մեծ խնամք չի պահանջում, միայն ցանկալի է ցանքերը զերծ պահել մոլախոտերից: Զի սիրում աղուտ և ճահային հողեր: Ինչպես և սիսեռի մշակման դեպքում, ցանկալի է նույն տեղում ցանքերը հերթագայել ցորենի կամ այլ հացազգիների ցանքերով: Ազոտական պարարտանյութերը նվազեցնում են բերքը
Տեսակի ընտրության հիմնավորումը	Զնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին, բնակչության կողմից սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	http://lori.agro.am/index.php?id=4436&tx_ttnews%5Btt_news%5D=6222&cHash=c6e8264b985f1081fe745a43384dc0 http://kotayk.gamk.am/?p=909

Ընտանիք	Fabaceae - Բակլազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Onobrychis antasiatica</i> Khin.  
Գրական անվանումը	Կորնգան անդրկովկասյան
Ժողովրդական անվանումը	Կորնկան, կարմրառվույտ, ոլոռնառվույտ, մեղրածուծ, մեղրածծուկ, մելիովտ
Նկարագրությունը	Բազմամյա խոտաբույս է. ցողունը՝ ուղիղ, 40-60 (80) սմ բարձր., վերնում՝ ճյուղավորված, տերևները՝ զույգ-փետրաձև, ծաղկաբույլերը 4-7 սմ երկ., պտղաբերության էտապում՝ երկարացող, պսակաթերթերը վառ վարդագույն, երբեմն մուգ բծերով, ունդը կիսակլոր է, 6 մմ երկար., խիտ կարճ-թավոտ
Աճման վայրը	Տափաստաններում, չոր խոտածածկ լանջերին, երբեմն՝ թփուտներում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Իջևանի, Գեղամի, Ապարանի, Սևանի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասում՝ Հարավային և արևելյան Անդրկովկասում, Իրանում, Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանում, Արևմտյան Սիբիրում, Կենտրոնական Ասիայում
Բույսի օգտագործումը	Կերային, մեղրատու
Կենսաբանական ակտիվ	Վիտամիններ, սպիտակուցներ, ածխաջրեր, հանքային աղեր և այլն

նյութերը	
Բույսի հավաքվող մասերը	Վերգետնյա մասը և սերմերը
Հավաքման ժամկետները	Ցանկալի է կորնգանը սեզոնի ընթացքում հնձել երկու անգամ; առաջինը՝ ծաղկումը սկսելուց առաջ, երկրորդը՝ ցրտերը ընկնելուց մեկ ամիս առաջ
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կարող են կրճատվել
Վտանգվածության աստիճանը	Նկատվում է բնակմիջավայրի կրճատում
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և գյուղատնտեսությանը մատակարարել արժեքավոր մեղրատու և կերային մշակաբույս
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Բազմամյա ցրտադիմացկուն և չորադիմացկուն մշակաբույս է, չի աճում թթու և աղակալած հողերի վրա, արմատների վրա կան պալարաբակտերիաներ: Կուլտուրան լավագույն կերպով հերթագայվում է աշնանացան ցորենի, եգիպտացորենի, արմատապտղավորների և այլ մշակաբույսերի հետ: Սերմերը ցանվում են համատարած կերպով, կամ լայն գոտիներով: Հիմնականում ցանվում է զարնանը, սակայն տարածված է նաև ամառային ցանքը
Տեսակի ընտրության հիմնավորումը	Հայաստանի հնագույն կերային կուլտուրաներից է
Դիտողություններ	

Ընտանիք	Fabaceae - Բակլազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Pisum sativum</i> L. 
Գրական անվանումը	Ոլոռ ցանովի
Ժողովրդական անվանումը	Ոլոռնախոտ, ոլոռն, մաշ, ճուլպան
Նկարագրությունը	Միամյա, մերկ, խոտաբույս. փովող, կառչող, երբեմն՝ կանգուն, բարձրությունը՝ 20 - 250 սմ խոտաբույս; տերևները՝ զույգ փետրաձև, ավարտվում են բեղիկով, ծաղկաբույլը ողկույզ է կամ կեղծ հովանոց, ծաղիկները՝ սպիտակ կամ կարմրամանուշակագույն երանգավորումներով, պտուղը՝ սրածն ունդ է, 5-7 (10) սմ երկար., սերմերը՝ 3-10 հատ, ձվաձև, կլորավուն, անկյունավոր, հարթ կամ կնճռոտ, տարբեր գույների
Աճման վայրը	Հայաստանում՝ մշակության մեջ
Տարածումը	Մշակվում է ամենուրեք
Բույսի օգտագործումը	Մսնդային և կերային
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (A, B, C), սպիտակուցներ, ածխաջրեր (օսլա, թաղանթանյութ), ճարպեր, հանքային աղեր և այլն

Բույսի հավաքվող մասերը	Մերմերը և մատղաշ ունդերը սննդի, խոտային մասսան՝ կերի համար
Հավաքման ժամկետները	Կանաչ ունդերը՝ գարնանը և վաղ ամռանը, սերմերը՝ հուլիսից-հոկտեմբեր
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	-
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա հնադավան սորտերը մշակության մեջ և բնակչությանը մատակարարել դիետիկ, բուժիչ, արժեքավոր հատիկաընդեղեն
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Միամյա, խոնավասեր, ցրտադիմացկուն մշակաբույս է, ծաղկման փուլում պահանջկոտ է ջրի նկատմամբ: Ցանքերը հարկավոր է հերթագայել աշնանացան ցորենի, կարտոֆիլի, ճակնդեղի, եգիպտացորենի հետ: Ցանկալի է պարարտացնել գոմաղբով (20 տ/հա), ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերով: Գարնանը, ցանքից առաջ, սերմերը անհրաժեշտ է ախտահանել ֆունգիցիդներով և վարակել ռիզոբիումով: Երբեմն լավ արդյունք է ստացվում գարու հետ խառը ցանքի դեպքում
Տեսակի ընտրության հիմնավորումը	Զնայած սննդային և տնտեսական բարձր հատկություններին, արդյունաբերական մասշտաբներով դեռևս չի մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Grossulariaceae - Կոկոռազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Ribes nigrum</i> L. 
Գրական անվանումը	Հաղարջենի սև
Ժողովրդական անվանումը	Հաղարջ, դարաղաթ
Նկարագրությունը	Տերևաթափ, մինչև 1-1.5 մ բարձր. թուփ է. ընձյուղները մազմուկապատ են, տերևները պարզ են, 3-5(8) սմ երկար., 3-5 բլթակներով, խոշոր և սուր ատամնակներ, ողկույզներն ունեն 8 սմ երկար.՝ կազմված 5-10 ծաղիկներից, պտուղները հոտավետ, մինչև 1 սմ տրամագծով հատապտուղներ են՝ կանաչավուն կամ գորշասև՝ 3-30 սերմերով
Աճման վայրը	Խոնավ վայրերում՝ գետափերին, լճերի ափերին, անտառներում և անտառեզրերին, ճահիճների շրջակայքերում
Տարածումը	Հայաստանում լայնորեն մշակվում է: Հայաստանից դուրս՝ Եվրոպա, Սիբիր, Ղազախստան, Չինաստան, Մոնղոլիա
Բույսի օգտագործումը	Մսնդային, դեղագործական, մեղրատու և գեղազարդային
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (B1, C, P), ածխաջրեր, օրգանական թթուներ, աղաղանյութեր, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները՝ սննդի համար, իսկ տերևները, պտուղները և բողբոջները՝ դեղագործական նպատակով
Հավաքման ժամկետները	Բողբոջները՝ գարնանը, պտուղները՝ հուլիս-սեպտեմբերին, տերևները՝ պտուղները հավաքելուց հետո

Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	-
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Անհրաժեշտ է ավելացնել մշակվող տարածքները
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Ցրտադիմացկուն, խոնավասեր և ստվերադիմացկուն մշակաբույս է: Բազմացվում է փայտացած, կանաչ կամ ձմեռային կտրոններով, թուփը կիսելով և անդալիսով: Բույսը նույն տեղում թողնում են 8-10 տարի: Ավելի մեծ բերք ստանալու համար մեկ տեղում աճեցվում են սև հաղարջի մի քանի սորտեր: Վատ է աճում թթու, ծանր հողերում, պարբերաբար փխրեցման կարիք է զգում
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին, արդյունաբերական մասշտաբներով դեռևս չի մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Grossulariaceae - Կոկոռշագգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Ribes vulgare</i> Lam. 
Գրական անվանումը	Հաղարջենի սովորական
Ժողովրդական անվանումը	Հաղարջ
Նկարագրությունը	Տերևաթափ, 1-2 մ բարձր. թուփ է, ընձյուղները մազմզուկապատ են, տերևները պարզ են, 3-10 սմ երկար., 3-5 ատամնակալ բլթակներով: Ողկույզներն ունեն մինչև 12 սմ երկարություն՝ կազմված 3-10 ծաղիկներից, պտուղները քաղցր-թթվաշ, մինչև 1.2 սմ տրամագծով հատապտուղներ են՝ վառ կարմիր գույնի
Աճման վայրը	Խոնավ վայրերում՝ գետերի, լճերի ափերին, անտառեզրերին
Տարածումը	Հայաստանում մշակվում է լայնորեն, Հայաստանից դուրս՝ Եվրոպայում
Բույսի օգտագործումը	Մսնդային
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (B2, B6, D, E, K, P), ածխաջրեր, օրգանական թթուներ, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները
Հավաքման ժամկետները	Հուլիս-սեպտեմբեր

Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	-
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Անհրաժեշտ է ավելացնել մշակվող տարածքները
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Տերևաթափ, ցրտադիմացկուն, չորադիմացկուն և լուսասեր մշակաբույս է: Բազմացվում է թուփը կիսելով, անդալիսով, փայտացած և կանաչ կտրոններով: Բույսը նույն տեղում թողնում են 12-15 տարի: Ավելի մեծ բերք ստանալու համար հարկավոր է ճյուղերը պարբերաբար էտել գարնանը և աշնանը, ինչպես նաև պտղաբերությունից հետո հարկավոր է իրականացնել սանիտարական էտ: Լավ է աճում ավազակավային, թեթև հողերում հողերում, պարբերաբար փխրեցման կարիք է զգում
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին՝ բնակչության կողմից սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Grossulariaceae - Կոկոռշագգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Grossularia reclinata</i> (L.) Mill. 
Գրական անվանումը	Կոկոռշենի սովորական
Ժողովրդական անվանումը	Կոկոռշ, փշահաղարջենի, փշալից հաղարջենի
Նկարագրությունը	Տերևաթափ, 1.5 մ բարձր. թուփ է, ընձյուղները տերևահանգույցներում ունեն մինչև 2.4 սմ երկարությամբ 2-4 փշեր, տերևները պարզ են, 1-6 սմ երկար., 3-5 բլթակներով, ծաղիկները տերևածոցներում հավաքված են 1-3 փնջերում, պտուղները գնդաձև կամ լայն էլիպսաձև, 1.3-1.5 սմ տրամագծով հատապտուղներ են՝ կանաչավուն, դեղին կամ ծիրանագույն
Աճման վայրը	Անտառներում, անտառեզրերին, թփուտներում, քարացրոններում, վերին լեռնային գոտում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Լոռու, Ապարանի, Սևանի, Երևանի և Դարալագեզի ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկաս, Եվրոպա, Հյուսիսային Աֆրիկայի լեռներ
Բույսի օգտագործումը	Մսնդային, դեղագործական և մեղրատու
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամին C, սպիտակուցներ, ածխաջրեր, օրգանական թթուներ, հանքային աղեր և այլն

Բույսի հավաքվող մասերը	Պտուղները
Հավաքման ժամկետները	Հուլիս
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կրճատվում են
Վտանգվածության աստիճանը	Նկատվում է բնակմիջավայրի կրճատում
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր հատապտուղ
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Համեմատաբար լուսասեր, ջերմասեր ու չորասեր, օդաթափանց ու ոչ թթու հողեր նախընտրող, երկարակյաց (մինչև 20 տարի) թուփ է: Ճիշտ մշակման դեպքում մեկ թուփը կարող է տալ մինչև 12 կգ հատապտուղ: Բազմացնում են փայտացած կամ ձմեռային կտրոններով, թփի կիսումով, կանաչ կտրոններով և անդալիսով
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին՝ բնակչության կողմից սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Juglandaceae - Ընկուզազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Juglans regia</i> L.   
Գրական անվանումը	Ընկուզենի սովորական
Ժողովրդական անվանումը	Պոպոք, ճղոպուր, կակալի
Նկարագրությունը	Տերևաթափ, միատուն, մինչև 25-30 մ բարձր. ծառ է, տերևները կենտ-փետրածն են, տերևիկները՝ ամբողջաեզր, 6-11 հատ, երկարավուն-ձվաձև կամ էլիպսաձև, գագաթի տերևիկը՝ երկար սրված, արական ծաղիկները կատվիկներ են՝ 4-6 սմ երկար., հետագայում՝ երկարացած, պտուղները խոշոր՝ 3.5-5 սմ երկար., գնդաձև կամ ձվաձև
Աճման վայրը	Անտառներում, լեռնալանջերին, գետահովիտներում, ստորին և միջին լեռնային բարձրություններում, ծ. մ. մինչև 1700 մ բարձր. վրա: մշակվում է մինչև 2000 մ բարձրություններում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Իջևանի և Զանգեզուրի ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասում, Իրանում, Բալկաններում, Կենտրոնական Ասիայում
Բույսի օգտագործումը	Մսնդային, դեղագործական, մեղրատու, տեխնիկական
Կենսաբանական ակտիվ	Վիտամիններ (A, C, K, P), ֆլավոնոիդներ, կարոտիններ, սպիտակուցներ, ածխաջրեր, ճարպեր, ամինաթթուներ,

նյութերը	աղաղանյութեր, եթերային յուղեր, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները՝ սննդի, կանաչ զանգվածը՝ դեղագործական նպատակներով, բնափայտը՝ կահույքի համար
Հավաքման ժամկետները	Օգոստոսի վերջ-սեպտեմբեր
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կրճատվում են
Վտանգվածության աստիճանը	Վայրաճ առանձնյակների պտուղներն ինտենսիվորեն հավաքվում են բնակչության կողմից՝ օգտագործման և վաճառքի համար: Երբեմն հատվում են բարձրարժեք բնափայտի համար
Պահպանության միջոցառումները	Տեսակի մշակման ավելացումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել դիետիկ, բուժիչ, արժեքավոր պտուղ
Մշակության համապատ. վայրը	Արարատի մարզում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Ցրտադիմացկուն, լուսասեր, երկարակյաց ծառ է: Վատ է տանում թթու և ճահճային հողերը, նախընտրում է խոնավ, թեթև կավային հողեր: Տնկանյութը ստանում են հիմնականում սերմերի ցանքի միջոցով: Մայրական հատկությունները պահպանելու համար կիրառվում է նաև պատվաստման մեթոդը: Ծառերի հեռավորությունը կախված է ընկուզենու սորտերից: Վերջին ժամանակներում զարգացում է ստանում միջին աճ ունեցող սորտերի մշակումը: Այս դեպքում ծառերը տնկում են 5x6 մ սխեմայով
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին, արդյունաբերական մասշտաբներով դեռևս չի մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Lamiaceae - Խուլեղինջազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Teucrium polium</i> L.  
Գրական անվանումը	Լերդախոտ ալեհեր
Ժողովրդական անվանումը	Մայրամախոտ, զարոշ
Նկարագրությունը	Բազմամյա կիսաթուփ. ցողունները բազմաթիվ, 10-40 սմ բարձր., հիմքում՝ փայտացող, սպիտակ-թավոտ: տերևները՝ նստադիր, նշտարաձև-գծային, 0.5-3.5 սմ երկար., ծաղիկները՝ մանր, առաջացնում են գնդաձև ծաղկաբույլեր, պտուղները՝ մանր, ձվաձև ընկուզիկներ
Աճման վայրը	Թփուտներում, տափաստաններում, լեռնալանջերին, չոր կավային, ավազային, կրաքարային լանջերին՝ մինչև վերին լեռնային գոտի
Տարածումը	Հայաստանում հանդիպում է բոլոր ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասում, Իրանում, Հարավային Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանում, Կենտրոնական Ասիայում
Բույսի օգտագործումը	Դեղագործական
Կենսաբանական ակտիվ	Վիտամիններ, տերպենոիդներ, տեուկրին, եթերային յուղեր, հանքային աղեր և այլն

նյութերը	
Բույսի հավաքվող մասերը	Բույսի ողջ վերգետնյա մասը
Հավաքման ժամկետները	Վաղ գարնանից սկսած՝ մինչև ծաղկումը (մայիս-օգոստոս)
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ համեմատաբար հաստատուն են
Վտանգվածության աստիճանը	Հավաքվում է բնակչության կողմից
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Ցրտադիմացկուն, չորասեր, լուսասեր և սովերադիմացկուն, բազմամյա կիսաթուփ է: Լավ է աճում թեթև հողերի վրա: Բազմանում է սերմերով (աշնանային կամ վաղ-գարնանային ցանք) կամ վեգետատիվ եղանակով (միամյա կտրոններով, թփի կիսումով)
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած դեղագործական կարևոր նշանակությանը՝ բնակչության կողմից չի մշակվում
Դիտողություններ	Արևմտյան Եվրոպայում մշակվել է սկսած 16-րդ դարից

Ընտանիք	Lamiaceae - Խուլեղինջազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Thymus kotschyanus</i> Boiss. et Hohen. 
Գրական անվանումը	Ուրց Կոչիի
Ժողովրդական անվանումը	Դաշտի ուրց, թյում, թիմ, իառ, խառ, խազար
Նկարագրությունը	Բազմամյա կիսաթուփ. ցողունները՝ բարձրացող՝ 8-15 սմ բարձր., մազմզուկապատ, տերևները՝ կոթունավոր, ձվաձև, ձվաձև-եռանկյունաձև, 0.8-1.8(2.5) սմ երկար., ծաղիկները՝ մանր, առաջացնում են գնդաձև ծաղկաբույլեր, պսակաթերթերը՝ սպիտակ, պտուղները՝ մանր, ձվաձև ընկուզիկներ
Աճման վայրը	Ստորինից մինչև վերին լեռնային գոտիներ, աճում է չոր լանջերին
Տարածումը	Հայաստանում հանդիպում է բոլոր ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասում, Փոքր Ասիայում, Իրանում, Իրաքում
Բույսի օգտագործումը	Սննդային և դեղագործական
Կենսաբանական ակտիվ նյութերը	Եթերային յուղեր (հիմնական նյութը՝ թիմոլ, կան նաև գերանիոլ և ցիտրոնելոլ)

Բույսի հավաքվող մասերը	Բույսի վերգետնյա մասը
Հավաքման ժամկետները	Վաղ գարնանից սկսած՝ մինչև ծաղկումը (մայիս-օգոստոս)
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ համեմատաբար հաստատուն են
Վտանգվածության աստիճանը	Ինտենսիվորեն հավաքվում է բնակչության կողմից օգտագործման և վաճառքի համար
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Լուսասեր, չորադիմացկուն, ջերմասեր, սակայն ցրտադիմացկուն, ցածրաճ կիսաթուփ է: Պահանջկոտ չէ հողի բերրիության նկատմամբ, բայց լավ է աճում բավարար սննդանյութեր պարունակող թեթև, ոչ թթու (նախընտրում է չեզոք կամ հիմնային միջավայր) հողերում: Բազմացվում է սածիլներով կամ ուղղակի գրունտի մեջ սերմերի ցանքով: Սերմերը 1:3 հարաբերությամբ խառնում են գետային մանր ավազի հետ և բարակ շերտով փռում նախորոք պատրաստված հողի մակերեսին
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային և դեղագործական կարևոր նշանակությանը՝ բնակչության կողմից չի մշակվում
Դիտողություններ	Հեռանկարային է մշակության համար (ՍՍՀՄ ֆլորան, հատոր 21, էջ 472):

Ընտանիք	Lamiaceae - Խուլեղինջազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Thymus serpyllum</i> L. 
Գրական անվանումը	Ուրց սողացող
Ժողովրդական անվանումը	Դաշտուրց, թյում, խոռ, խուռ, դոհ դաղձ, վայրի ծոթրին, մեշ
Նկարագրությունը	Բազմամյա կիսաթուփ. ընձյուղները՝ պտկած, ծաղկակիր ցողունները՝ բարձրացող՝ 15 սմ բարձր., տերևները՝ կոթունավոր, էլիպսաձև կամ երկար-էլիպսաձև, 0.5-1.0 սմ երկար., ծաղիկները՝ մանր, առաջացնում են գնդաձև ծաղկաբույլեր, պսակաթերթերը՝ վարդագույն-բաց մանուշակագույն, պտուղները՝ երկարավուն ընկուզիկներ՝ 0.06 մմ երկար.
Աճման վայրը	Ստորինից մինչև վերին լեռնային գոտիներ, աճում է չոր լանջերին՝ հիմնականում ֆրիգանոիդ և լեռնատափաստանային բուսականության գոտիներում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Վերին Ախուրյանի, Շիրակի, Արագածի, Սևանի, Գեղամի, Երևանի, Դարալագեզի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասում (Հարավային Անդրկովկաս, Թալիշ), Փոքր Ասիայում, Իրանում, Իրաքում

Բույսի օգտագործումը	Մսնդային, դեղագործական, հիանալի մեղրատու, օժանելիքի արտադրություն
Կենսաբանական ակտիվ նյութերը	Եթերային յուղեր (հիմնական նյութը՝ թիմոլ, կան նաև գերանիոլ և ցիտրոնելոլ), ֆլավոնոիդներ, օրգանական թթուներ, աղաղանյութեր, խեժեր, սապոնիններ և այլն
Բույսի հավաքվող մասերը	Բույսի վերգետնյա մասը
Հավաքման ժամկետները	Վաղ գարնանից սկսած՝ մինչև ծաղկումը (մայիս-օգոստոս)
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կարող են կրճատվել ինտենսիվ հավաքի և բնակմիջավայրի կորստի պատճառով
Վտանգվածության աստիճանը	Ինտենսիվորեն հավաքվում է բնակչության կողմից օգտագործման և վաճառքի համար
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Լուսասեր, չորադիմացկուն, ջերմասեր, ցածրաճ, հողի վրա փոված կիսաթուփ է: Պահանջկոտ չէ հողի բերրիության նկատմամբ, սակայն լավ է աճում բավարար սննդանյութեր պարունակող թեթև, ոչ թթու (նախընտրում է չեզոք կամ հիմնային միջավայր) հողերում: Բազմացվում է սածիլներով կամ ուղղակի գրունտի մեջ սերմերի ցանքով: Սերմերը 1:3 հարաբերությամբ խառնում են գետային մանր ավազի հետ և բարակ շերտով փռում նախորոք պատրաստված հողի մակերեսին
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային և դեղագործական կարևոր նշանակությանը՝ բնակչության կողմից չի մշակվում
Դիտողություններ	Հեռանկարային է մշակության համար (ՄՍՀՄ ֆլորան, հատոր 21, էջ 472)

Ընտանիք	Lamiaceae – Խուլեղինջազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Melissa officinalis</i> L.
Գրական անվանումը	Պատրինջ դեղատու
Ժողովրդական անվանումը	Մելիսա, մեղվախոտ, թուրինջախոտ
Նկարագրությունը	Բազմամյա, փնջավոր արմատներով և ստորգետնյա, խիտ ճյուղավորված ցողուններով խոտաբույս է: Ցողունը քառանիստ, ուղիղ՝ 30-120 սմ բարձր., տերևները ձվաձև են, երկարավուն, գեղձապատ: Ծաղկաբույլերը դասավորված են ցողունների վերին և միջին մասերում՝ տերևածոցերում: Պտուղը քառասերմ տուփիկ է, սերմերը՝ մանր, սև ընկուզիկներ
Աճման վայրը	Անտառներում, բացատներում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Իջևանի, Զանգեզուրի, Մեղրու ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասի մեծ մասում, Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանում, Իրանում, Կենտրոնական Ասիայում
Բույսի օգտագործումը	Սննդային, դեղագործական, օծանելիքի արտադրություն, հիանալի մեղրատու
Կենսաբանական ակտիվ	Եթերային յուղեր (ցիտրալ, գերանիոլ և ցիտրոնելոլ), ֆենիլպրոպանոլիդներ, թթուներ, ֆլավոնոլիդներ և այլն

նյութերը	
Բույսի հավաքվող մասերը	Չծաղկած ընձյուղները՝ սննդի, ծաղկող ընձյուղները՝ դեղագործական և օժանելիքի արտադրության նպատակներով
Հավաքման ժամկետները	Վաղ գարնանից մինչև օգոստոս-սեպտեմբեր
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կարող են կրճատվել բնակամիջավայրի կորստի պատճառով
Վտանգվածության աստիճանը	Հավաքվում է բնակչության կողմից
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Ջերմասեր, լուսասեր, ստվերատար մշակաբույս է: Աճեցվում է ինչպես սերմերով (ուղղակի ցանքով, կամ սածիլներով), այնպես էլ վեգետատիվ եղանակով (թփի կիսումով, արմատային կտրոններով կամ կողային, արմատակալած ընձյուղներով): Մշակաբույսը պահանջկոտ է հողի և մթնոլորտային խոնավության նկատմամբ, սակայն չի տանում գերխոնավացում: Նախընտրում է թեթև մեխանիկական կազմով, պարարտ հողեր
Տեսակի ընտրության հիմնավորումը	Բնակչության կողմից դեռևս անբավարար է մշակվում, չնայած վերջին տարիներին նկատվում է հետաքրքրության աճ
Դիտողություններ	

Ընտանիք	Lamiaceae - Խուլեղինջազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Mentha longifolia</i> (L.) Huds. 
Գրական անվանումը	Դաղձ երկարատերև
Ժողովրդական անվանումը	Անանուխ, անուխ, դաղձ, նանա, պիտնա, պուտինա, քարանուխ, քարընշուշ
Նկարագրությունը	Բազմամյա առանցքարմատավոր և ստորգետնյա ճյուղավորված պալարակիր ցողուններով խոտաբույս է: Ցողունը քառանիստ, ուղիղ՝ 30-75 սմ բարձր.: Տերևները ձվաձև են, երկարավուն, թավոտ Ծաղկաբույլերը ցողունների վերին մասերում դասավորված հասկեր են: Պտուղը քառասերմ տուփիկ է, սերմերը՝ մանր ընկուզիկներ
Աճման վայրը	Խոնավ վայրերում, գետերի, առուների, ջրանցքների ափերին, մարգագետիններում, անտառեզրերին, բարձրանալով մինչև վերին լեռնային գոտի
Տարածումը	Հայաստանում հանդիպում է բոլոր ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասի բոլոր շրջաններում, Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանում, Փոքր Ասիայում, Իրանում, Կենտրոնական Ասիայում, Հիմալայներում
Բույսի օգտագործումը	Մանդային, դեղագործական, օծանելիքի և օճառի արտադրություն, մեղրատու
Կենսաբանական ակտիվ նյութերը	Եթերային յուղեր, ասկորբինաթթուներ

Բույսի հավաքվող մասերը	Չծաղկած ընձյուղները՝ սննդի, ծաղկող ընձյուղների տերևները՝ դեղագործական և օժանելիքի, օձառի արտադրության նպատակներով
Հավաքման ժամկետները	Վաղ գարնանից մինչև օգոստոս-սեպտեմբեր
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ համեմատաբար հաստատուն են
Վտանգվածության աստիճանը	Ինտենսիվորեն հավաքվում է բնակչության կողմից օգտագործման և վաճառքի համար
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Լուսասեր, խոնավասեր, հողի բերրիության նկատմամբ պահանջկոտ բազմամյա տեսակ է: Բազմացվում է սերմերով (սերմերի մանրության պատճառով խորհուրդ է տրվում խառնել մանր գետային ավազի հետ 1:3 հարաբերությամբ և ցանել տորֆախառնուրդի վրա) և վեգետատիվ եղանակով (կանաչ կտրոնների արմատակալեցմամբ, թփի կիսումով, կոճղարմատների հատվածներով)
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին՝ բնակչության կողմից սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Malvaceae - Փիփերթազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Malva neglecta</i> Wallr. 
Գրական անվանումը	Փիփերթ արհամարհված
Ժողովրդական անվանումը	Մոլոշ, բալբա, բաղջուկ
Նկարագրությունը	Միամյա խոտաբույս: ցողունը՝ գետնատարած կամ բարձրացող, մինչև 60 սմ երկար., ճյուղավորվող, տերևները՝ մանր, մինչև 5 սմ տրամագծով, կլոր, բուր, կարճ բլթակներով, համարյա մերկ, երբեմն թույլ թավոտ, ծաղիկները՝ մանր, երկար կոթուններով, վարդագույն-սպիտակ, պտուղը՝ սկավառակաձև մանր տուփիկ, 6-7 մմ տրամագծով
Աճման վայրը	Աղբավայրերում, ճանապարհների եզրերին, այգիներում և բանջարանոցներում: Բարձրանում է մինչև վերին լեռնային գոտի
Տարածումը	Հայաստանում հանդիպում է բոլոր ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասի մեծ մասում, Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանում, Իրանում, Փոքր և Կենտրոնական Ասիայում, Սիբիրում, Հիմալայներում, Հեռավոր Արևելքում
Բույսի օգտագործումը	Սննդային և դեղագործական
Կենսաբանական ակտիվ	Վիտամիններ E, C, կարոտին (A-նախավիտամին)

նյութերը	
Բույսի հավաքվող մասերը	Մատղաշ ընձյուղները, տերևները
Հավաքման ժամկետները	Գարնանը և ամռանը
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ համեմատաբար հաստատուն են
Վտանգվածության աստիճանը	Ինտենսիվորեն հավաքվում է բնակչության կողմից օգտագործման և վաճառքի համար
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր բանջարեղեն
Մշակության համապատ. Վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Միամյա, լուսասեր, չորադիմացկուն, ցրտադիմացկուն, ոչ պահանջկոտ խոտաբույս է: Բազմացվում է սերմերով, սկզբնական շրջանում ցողունները աճում են հորիզոնական, հեռանալով արմատավզիկից բոլոր ուղղություններով, այնուհետև ցողունները բարձրանում են մինչև 50 սմ: Կանաչ զանգվածը հավաքում են մինչև ծաղկումը սկսվելը: Լավ է աճում հիմնային, փուխր, պարարտ հողերում
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային և դեղագործական բարձր հատկություններին՝ բնակչության կողմից չի մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Malvaceae – Փիփերթազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Malva silvestris</i> L. 
Գրական անվանումը	Փիփերթ անտառային
Ժողովրդական անվանումը	Մոլոշ, բալբա, բաղջուկ
Նկարագրությունը	Երկամյա խոտաբույս; ցողունը՝ գետնատարած կամ բարձրացող, մինչև 30-120 սմ երկար., ճյուղավորվող, տերևները՝ մինչև 8 սմ տրամագծով, կլորավուն կամ լայն-ձվաձև, եկար, 5-7 բլթակներով, նոսր ծածկված կոշտ մազիկներով, ծաղիկները՝ միջին մեծության վարդագույն, պտուղը՝ սկավառակաձև մանր տուփիկ՝ 10 (9-13) մերկ պտղիկներով
Աճման վայրը	Անտառային բացատներում, թփուտներում, աղբավայրերում, այգիներում և բանջարանոցներում: Բարձրանում է մինչև միջին լեռնային գոտի
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Լոռու, Իջևանի, Երևանի, Դարալագեզի, Զանգեզուրի, Մեղրու ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասի բոլոր շրջաններում, Փոքր և Կենտրոնական Ասիայում, Եվրոպայում
Բույսի օգտագործումը	Սննդային, դեղագործական, գեղազարդային
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ E, C, կարոտին (A-նախավիտամին)
Բույսի հավաքվող մասերը	Մատղաշ ընձյուղները, տերևները
Հավաքման ժամկետները	Գարնանը և ամռանը

Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կարող են կրճատվել՝ բնակամիջավայրի կորստի պատճառով
Վտանգվածության աստիճանը	Բնտենսիվորեն հավաքվում է բնակչության կողմից օգտագործման և վաճառքի համար
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր բանջարեղեն
Մշակության համապատ. Վայրը	Արարատի մարզում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Երկամյա, ստվերատար, ցրտադիմացկուն, ոչ պահանջկոտ խոտաբույս է: Բազմացվում է սերմերով, սկզբնական շրջանում ցողունները աճում են հորիզոնական, հեռանալով արմատավզիկից բոլոր ուղղություններով, այնուհետև ցողունները բարձրանում են մինչև 50 սմ: Կանաչ զանգվածը հավաքում են մինչև ծաղկումը սկսվելը: Լավ է աճում փոխր, պարարտ հողերում
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային և դեղագործական բարձր հատկություններին, բնակչության կողմից չի մշակվում
Դիտողություններ	Անցյալում մշակվել է եգիպտացիների, հոմեացիների և հույների կողմից

Ընտանիք	Malvaceae - Փիփերթազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Hibiscus esculentus</i> L. 
Գրական անվանումը	Բադրջուկ ուտելի
Ժողովրդական անվանումը	Բամիա, Կուտատուկ
Նկարագրությունը	Միամյա խոտաբույս. ցողունը հաստ է, փայտացող, հիմքից՝ ճյուղավորվող (2-7ցողուն), բարձրությունը՝ 30-40 սմ (ցածրած ձևերի մոտ), կամ մինչև 2 մ (բարձրած ձևերի մոտ), տերևները երկարակոթուն են, խոշոր, 5-7 բլթակավոր, ծաղիկները միայնակ են, երկսեռ, խոշոր: պտուղը երկարավուն, կարճ մազմզուկներով ծածկված, բազմասերմ, որոշ ձևերի մոտ մինչև 25 սմ երկար. տուփիկ է
Աճման վայրը	Լայնորեն մշակվում է
Տարածումը	Հայաստանում վայրի վիճակում չի հանդիպում: Հայաստանից դուրս՝ մշակվում է Կովկասում, Ղրիմում, Փոքր Ասիայում, Իրանում, Կենտրոնական Ասիայում, բոլոր արևադարձային և մերձարևադարձային երկրներում
Բույսի օգտագործումը	Սննդային, դեղագործական և կերային (շերամի թրթուր, խոշոր եղջերավոր անասուններ)
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամին C, ճարպեր, սպիտակուցներ, ածխաջրեր, օրգանական թթուներ, լորձնային նյութեր, հանքային աղեր և այլն

Բույսի հավաքվող մասերը	Չհասունացած տուփիկները, սերմերը
Հավաքման ժամկետները	Հուլիսից սկսած՝ մինչև սառնամանիքները
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	-
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա հնադավան սորտերը մշակության մեջ և բնակչությանը մատակարարել դիետիկ, բուժիչ, արժեքավոր բանջարեղեն
Մշակության համապատ. վայրը	Արարատի մարզում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Լուսասեր, ջերմասեր, չորադիմացկուն մշակաբույս է, սակայն պահանջում է կանոնավոր ոռոգում՝ հատկապես ծաղկման և պտղակալման շրջանում: Բազմացվում է սերմերով (ցանում են 60 սմ հեռավորության վրա գտնվող շարքերում) կամ սածիլներով: Լավ է աճում օդաթափանց, թեթև, փուխր, պարարտ հողերում, վատ է զարգանում աղակալած և ճահճային հողերում
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած մշակվում է ֆերմերների կողմից, սակայն արդյունաբերական մասշտաբների այն դեռևս չի հասնում
Դիտողություններ	

Ընտանիք	Moraceae - Թթազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Morus alba</i> L. 
Գրական անվանումը	Թթենի սպիտակ
Ժողովրդական անվանումը	Թթի, շերամաձառ
Նկարագրությունը	Տերևաթափ, մինչև 15-18 մ բարձր. ծառ է, ճյուղերը՝ գորշ-թխավուն կեղևով, տերևները պարզ են, փափուկ, սրտաձև-ձվաձև, ամբողջական կամ փոքրիշատե անհավասար-բլթակավոր, սղոցաեզր, 6-15 սմ երկար.: Ծաղիկները տարասեռ են՝ նստադիր, հավաքված երկար ծաղկաբույլերով, պտղաբույլերը՝ սպիտակ, կարմրավուն կամ բոլորովին սև, 2-3,5 սմ երկ. կեղծ կորիզապտուղ պտղաբույլերով
Աճման վայրը	Մշակվում է Հայաստանի ստորին և միջին լեռնային գոտիներում
Տարածումը	Վայրի վիճակում տարածված է Չինաստանում
Բույսի օգտագործումը	Սննդային, կերային (շերամի որդ), դեղագործական և տեխնիկական
Կենսաբանական ակտիվ նյութերը	Տերևներում պարունակվում են ֆլավոնոիդներ, աղաղանյութեր, եթերային յուղեր, օրգանական թթուներ և այլն: Պտուղներում՝ շաքարներ, վիտամին C, ֆոսֆորաթթու, կարոտին և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղներ, տերևներ, բնափայտ և այլն

Հավաքման ժամկետները	Պտուղները՝ հունիս-օգոստոսին
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	-
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա հնադավան սորտերը մշակության մեջ և բնակչությանը մատակարարել դիետիկ, բուժիչ, արժեքավոր միրգ
Մշակության համապատ. վայրը	Արարատի մարզում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Զերմասեր, ցրտադիմացկուն, լուսասեր, չորադիմացկուն, ոչ պահանջկոտ, երկարակյաց ծառեր են: Բացմացվում են սերմերով, կտրոններով, անդալիսով, լավագույն սորտերը՝ պատվաստումով: Կարող է աճել աղային հողերում, սակայն գերադասում է պարարտ, չեզոք կամ կրային հողեր: Վնասատուներ և հիվանդություններ քիչ ունի, սակայն պտուղները պետք է պաշտպանել թռչուններից
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած մշակվում է ֆերմերների կողմից, սակայն արդյունաբերական մասշտաբների այն դեռևս չի հասնում
Դիտողություններ	

Ընտանիք	Moraceae - Թթազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Morus nigra</i> L. 
Գրական անվանումը	Թթենի սև
Ժողովրդական անվանումը	Խառ թուրթ, մրրի
Նկարագրությունը	Տերևաթափ, մինչև 20 մ բարձր. ծառ է: Տերևները պարզ են, սղոցաեզր, սրտաձև հիմքով, կարճ սրածայր գագաթով, կոշտ մակերեսով՝ վերնից խիստ կնճռոտ, ներքևից՝ մազմզուկապատ: Ծաղիկները տարասեռ են՝ նստադիր, հավաքված ծաղկաբույլերով, պտուղները՝ հյութալի են, քաղցրաթթվաշ, սև-մանուշակագույն, հավաքված 2-2,5 սմ երկ. կեղծ կորիզապտուղ պտղաբույլերով
Աճման վայրը	Մշակվում է Հայաստանի տաք, ցածրադիր վայրերում
Տարածումը	Վայրի վիճակում տարածված է Իրանում և Կենտրոնական Ասիայում
Բույսի օգտագործումը	Սննդային, կերային (շերամի որդ), դեղագործական, տեխնիկական գեղագարդային
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (B1, B2, B3, B6, B9, C, խոլին), սպիտակուցներ, ածխաջրեր, ճարպեր, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղներ, բնափայտ և այլն

Հավաքման ժամկետները	Հունիս-հուլիս (օգոստոս)
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	-
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա հնադարյան սորտերը մշակության մեջ և բնակչությանը մատակարարել դիետիկ, բուժիչ, արժեքավոր միրգ
Մշակության համապատ. վայրը	Արարատի մարզի ցածրադիր համայնքներում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Ջերմասեր, լուսասեր, չորադիմացկուն, երկարակյաց ծառեր են: Բացմացվում են սերմերով, կտրոններով, անդալիսով, լավագույն սորտերը՝ պատվաստումով: Գերադասում է պարարտ, ջրաթափանց, թեթև, չեզոք կամ կրային հողեր: Արմատայիմ համակարգը մակերեսային է: Վնասատուներ և հիվանդություններ քիչ ունի, սակայն պտուղները պետք է պաշտպանել թռչուններից
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին, բնակչության կողմից սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Poaceae - Հացազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Secale cereale</i> L. 
Գրական անվանումը	Աշորա մշակովի կամ հատիկային
Ժողովրդական անվանումը	Տարեկան, աշարա, խաճուրակ
Նկարագրությունը	Միամյա կամ երկամյա խոտաբույս է, ցողունը՝ ուղիղ, 60-200 սմ բարձրությամբ, տերևները՝ լայն-գծային, տափակ, վերևից խորդուբորդ, մերկ, հասկերը՝ չջարդվող, խիտ, երկշարք, 5-15 սմ երկար., հասկիկները՝ երկծաղիկ (երրորդ ծաղիկը՝ թերզարգացած), քիստերը՝ 2-5 սմ երկար., հատիկը՝ երկարավուն, էլիպսաձև, լայնակի կնճիռներով, ներսի կողմից՝ խորը ակոսով
Աճման վայրը	Հանդիպում է մշակովի դաշտերում, որպես մոլախոտ: Որպես մաքուր կուլտուրա Հայաստանում հազվադեպ է մշակվում: Աճում է ստորինից մինչև վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 700-2000 մ բարձրություններում
Տարածումը	Հայաստանից դուրս մշակվում է երկու կիսագնդերի բոլոր արտամերձարևադարձային երկրներում: Որպես դաշտային-աղբաբույս հանդիպում է Անդրկովկասում, Անատոլիայում, Սիրիայում, Իրանում, Աֆղանստանում
Բույսի օգտագործումը	Սննդային, դեղագործական և կերային
Կենսաբանական ակտիվ	Վիտամիններ (B, E, PP), ամինաթթուներ, սպիտակուցներ, ածխաջրեր, ճարպեր, ֆերմենտներ, թիամին,

նյութերը	նիկոտինային թթու, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Հատիկները (սերմերը)
Հավաքման ժամկետները	Ամռան վերջ – աշնան սկիզբ
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարներին վտանգ չի սպառնում
Վտանգվածության աստիճանը	Վտանգված չէ
Պահպանության միջոցառումները	Անհրաժեշտ է ավելացնել մշակվող տարածքները
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Ցրտադիմացկուն, համեմատաբար չորադիմացկուն մշակաբույս է: Պահանջկոտ չէ հողերի նկատմամբ, կարող է աճել թեթև ավազային, ծանր կավային, ճահճոտ, ինչպես նաև խոպան հողերում: Լավ թփակալում է և ճնշում մոլախոտերին: Կան աշնանացան և գարնանացան սորտեր
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին՝ բնակչության կողմից սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Poaceae - Հացազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Zea mays</i> L. 
Գրական անվանումը	Եգիպտացորեն
Ժողովրդական անվանումը	Սիմինդր, մայծ
Նկարագրությունը	Միամյա միատուն խոտաբույս: ցողունը՝ ուղիղ, առանց օղային խոռոչի ներսում, 3 մ և ավել բարձր., տերևները՝ խոշոր, 8-42 հատ, ուղիղ-գծային, մինչև 1 մ երկար., արական ծաղկաբույլերը՝ ցողունի գագաթին, իգականները տեղադրված են տերևածոցերում՝ առաջացնելով կողրեր: Սերմերը խոշոր են, մեկ կողրի վրա մինչև 1000 հատ, գունավորումը՝ դեղին, սպիտակ, մանուշակագույն, սև և այլն
Աճման վայրը	Հայաստանում՝ միայն մշակության մեջ
Տարածումը	Հայրենիքը Մեքսիկան է: Մշակվում է ողջ աշխարհում
Բույսի օգտագործումը	Սննդային, դեղագործական և կերային
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (A, B ₁ , B ₃ , B ₉ , C), սպիտակուցներ, ածխաջրեր, ճարպեր, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Կողրերը՝ սննդի, սպիները սոնակների հետ՝ դեղագործական, վերգետնյա մասը՝ կերային նպատակներով
Հավաքման ժամկետները	Օգոստոսից մինչև ցրտահարությունների սկսվելը

Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	-
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Անհրաժեշտ է ավելացնել մշակվող տարածքները
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Ջերմասեր, լուսասեր, մինչև 3(4) մ բարձրությամբ, աշխարհում լայնորեն տարածված մշակաբույս է: Աճեցնում են սերմերով կամ սածիլներով: Սերմերը ցանում են 5-10 սմ խորությամբ, իրարից 5 սմ հեռավորության վրա և 70 սմ շարքերի միջև: Պահանջում է կրային, փուխր, պարարտ, հզոր հողեր: Կարիք է զգում բժախնդի խնամք, քանի, որ կարիք է զգում սննդանյութերի մեծ քանակի և ունի ոչ քիչ վնասատուներ ու հիվանդություններ
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին, բնակչության կողմից սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Poaceae - Հացազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Panicum miliaceum</i> L.  
Գրական անվանումը	Կորեկ սովորական
Ժողովրդական անվանումը	Տուխ, տուխն
Նկարագրությունը	Միամյա, մի քանի ցողուններով խոտաբույս է: Ցողունը գլանաձև, ուղիղ, սնամեջ, 45-150 սմ բարձր., տերևները՝ ուղիղ-գծային, 18-65 սմ երկար., ծաղկաբույլը հուրան է, 10-60 սմ երկար., գտնվում է ցողունի զագաթին, հասկիկները երկծաղիկ են, մեկը՝ երկսեռ, մյուսը՝ արական կամ անսեռ: Մերմերը կլոր, օվալ կամ երկարավուն հատիկներ են՝ սպիտակ, դեղին, կարմիր, դարչնագույն և այլ գունավորմամբ
Աճման վայրը	Հայաստանում՝ միայն մշակության մեջ
Տարածումը	Հայրենիքը Հարավ-Արևելյան Ասիան է: Մշակվում է ողջ աշխարհում
Բույսի օգտագործումը	Սննդային, դեղագործական և կերային
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (B1, B2, PP), կարոտին, օսլա, սպիտակուցներ, ճարպեր, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Հատիկները՝ սննդի և կերային, վերգետնյա մասը՝ կերային նպատակներով
Հավաքման ժամկետները	Օգոստոս-հոկտեմբեր

Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	-
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա հնադավան սորտերը
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Լուսասեր, չորադիմացկուն, ջերմասեր մշակաբույս է: Բազմացվում է սերմերով: զարնանային ցրտահարություններից խուսափելու համար ցանքը կատարվում է ուշ զարնանը: Նախընտրում է փուխր, սննդարար, չափավոր խոնավ, կառուցվածքային հողեր: Վեգետացիայի տևողությունը 60-120 օր է
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին՝ բնակչության կողմից սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Polygonaceae - Մատիտեղազգիներ		
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Rumex acetosa</i> L. 		
Գրական անվանումը	Ավելուկ սովորական կամ թթու		
Ժողովրդական անվանումը	Թրթնջուկ, գառնականջ, թթուկիչ, շողշողուկ		
Նկարագրությունը	Բազմամյա, կարճ առանցքարմատավոր խոտաբույս է, ցողունները մի քանիսն են՝ ուղիղ, մինչև 90 սմ բարձր.: Առաջին տարին բույսն առաջացնում է տերևավարդակ: Վարդակի և ցողունի հիմքում դասավորված տերևները կոթունավոր են, վերևի մասում գտնվողները՝ նստադիր: Ծաղկաբույլերը հուրանանման են, առաջանում են ցողունների վերին մասերում: Պտուղը եռանկյունաձև ընկուզիկ է		
Աճման վայրը	Լեռնամարգագետիններում, ալպիական գոտում		
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Լոռու, Շիրակի, Ապարանի, Սևանի, Դարեղեգիսի, Զանգեզուրի ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասի մեծ մասում, Եվրոպայում, Սիբիրում, Կենտրոնական Ասիայում		
Բույսի օգտագործումը	Մսնոգային և դեղագործական		
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (C, B, K), կարոտիններ, սպիտակուցներ, լիպիդներ, ֆլավոնոիդներ, թրթնջուկային թթու և այլն		
Բույսի հավաքվող մասերը	Գարնանային ընձյուղները՝ սննդի և դեղագործական, արմատները և սերմերը՝ դեղագործական նպատակով		
Հավաքման ժամկետները	Ընձյուղները՝ վաղ գարնանից սկսած մոտ երեք ամիս, սերմերը՝ ամռանը, արմատները՝ ողջ վեգետացիոն սեզոնին		

Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ համեմատաբար հաստատուն են
Վտանգվածության աստիճանը	Հավաքվում է բնակչության կողմից օգտագործման և վաճառքի համար
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր բանջարեղեն
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Ցրտադիմացկուն, լուսասեր, սովերատար մշակաբույս է: Կարող է աճել աղքատ հողերում, սակայն փուխը, պարարտ ավազակավային, թույլ թթու հողերում տալիս է տերևների միահամուռ, առատ աճ: Մեկ տեղում աճում է 3-4 տարի: Մերմերը ցանում են գարնանը, սակայն կարելի է և ուշ ամռանը կամ աշնանը: Կարիք է զգում քաղհանի, առատ ջրման և պարարտացման
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին՝ բնակչության կողմից սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Polygonaceae - Մատիստեղազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Rumex crispus</i> L. 
Գրական անվանումը	Ավելուկ գանգուր
Ժողովրդական անվանումը	Բոքի, պոքի, մգուկ, շեփ, դափաթոն
Նկարագրությունը	Բազմամյա, հզոր իլիկաձև արմատով խոտաբույս է: Ցողունը՝ ուղիղ, 50-120 սմ, վերին մասում՝ ճյուղավորված: Տերևները լայն նշտարաձև, ներքինները՝ կոթավոր, վերինները՝ նստադիր: Ծաղկաբույլերը՝ հուրան են, դուրս են գալիս տերևածոցերից: Մերմերը եռակողմ են, փայլուն, դարչնագույն
Աճման վայրը	Մարգագետիններում, խոնավ վայրերում, ջրամբարների ափերին, ճանապարհների եզրերին, կիրճերի լանջերին, ծ. մ. 600-2000 մ բարձրություններում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Լոռու, Շիրակի, Սևանի, Երևանի, Դարալագեզի և Զանգեզուրի ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասում, Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային Ամերիկայում
Բույսի օգտագործումը	Սննդային և դեղագործական
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (K), անտրազիկոզիդներ, օրգանական թթուներ, աղաղանյութեր, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Մատղաշ տերևները և ընձյուղները՝ սննդի, արմատները՝ դեղագործական նպատակով

Հավաքման ժամկետները	Մատղաշ տերևները և ընձյուղները՝ գարնանը, արմատները՝ ողջ վեգետացիոն շրջանում
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ համեմատաբար հաստատուն են
Վտանգվածության աստիճանը	Ինտենսիվորեն հավաքվում է բնակչության կողմից օգտագործման և վաճառքի համար
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր բանջարեղեն
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Ցրտադիմացկուն, լուսասեր, ոչ պահանջկոտ մշակաբույս է, սակայն փուխը, ազոտով հարուստ ավազակավային ու կավային, կրային, խոնավ հողերում տալիս է կենսազանգվածի միահամուռ, առատ աճ: Մեկ տեղում աճում է մի քանի տարի: Մերմերը հողում ծլունակությունը պահում են մինչև 10 տարի
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին՝ բնակչության կողմից սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Polygonaceae - Մատիսեղազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Fagopyrum esculentum</i> Moench 
Գրական անվանումը	Հնդկացորեն մշակովի
Ժողովրդական անվանումը	Հնդիկ ցորեն, թաթար ցորեն
Նկարագրությունը	Միամյա խոտաբույս: ցողունը՝ ուղիղ, ճյուղավորված, 30-120 սմ բարձր., հասունանալիս՝ կարմիր գույնի, տերևները լայն են, եռանկյունաձև՝ 4-7 սմ երկ., ծաղիկները հավաքված են ցողունի վերին մասում՝ նոսր ծաղկաբույլերով, սպիտակ են կամ վարդագույն: Պտուղը եռակողմ ընկուզիկ է՝ 5-7 մմ երկար., ծածկված է բավականին ամուր թաղանթով՝ կանաչ կամ շագանակագույն
Աճման վայրը	Հայաստանում միայն մշակության մեջ
Տարածումը	Մշակվում է ողջ Հյուսիսային կիսագնդի բարեխառն գոտում: Վայրի վիճակում չի հանդիպում
Բույսի օգտագործումը	Սննդային, դեղագործական, կերային և մեղրատու
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (B ₁ , B ₂ , B ₉ , E, PP), սպիտակուցներ, օսլա, ճարպեր, ածխաջրեր, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Մերմերը՝ սննդի և կերային, բույսի վերգետնյա մասը՝ կերային և դեղագործական նպատակներով
Հավաքման ժամկետները	Սեպտեմբեր-հոկտեմբեր

Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	-
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Անհրաժեշտ է ավելացնել մշակվող տարածքները
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Զերմասեր, խոնավասեր մշակաբույս է, սակայն վատ է պղարքերում 30 °C-ից բարձր ջերմաստիճանների դեպքում: Ծաղիկների բեղմնավորման համար մեծ դեր են խաղում մեղուները: Հողի նկատմամբ պահանջկոտ չէ, վատ է տանում միայն թթու և ծանր, աղակալած հողերը: Կարևոր է հողի նախացանքսային մշակումը
Տեսակի ընտրության հիմնավորումը	Նոր, հեռանկարային տեսակ է՝ հատկապես բարձրադիր վայրերում մշակության մեջ լայնորեն ներդնելու նպատակով
Դիտողություններ	

Ընտանիք	Rhamnaceae - Դժնիկազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Ziziphus jujuba</i> Mill. 
Գրական անվանումը	Ունաբ սովորական
Ժողովրդական անվանումը	Ունաբի, հունապի, հունապ
Նկարագրությունը	Տերևաթափ թուփ է կամ 5-10 մ բարձր. ծառ: Կեղևը հաստ է, ճյուղերը՝ փշոտ: Տերևները պարզ են, մանր-ատամնաեզր, սրտաձև կամ էլիպսաձև, փայլուն, մերկ, երեք հիմնական ջղերով: Ծաղիկները մանր են, կանաչա-սպիտակ, դեղնավուն, պտուղները ոչ մեծ, կլոր կամ էլիպսաձև կորիզապտուղներ են, հարթ, շագանակագույն մաշկով, հյութալի, մսալի, քաղցր և սննդարար պտղամսով
Աճման վայրը	Գետահովիտների հարավային լանջերին, ծ. մ. մինչև 1400 մ բարձրություններում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Երևանի ֆլորիստիկ շրջանում: Հայաստանից դուրս՝ Կովկասում, Փոքր Ասիայում, Իրանում, Միջերկրածովյան ավազանում, Կենտրոնական Ասիայում, Չինաստանում, Ճապոնիայում
Բույսի օգտագործումը	Մսնդային և դեղագործական
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (A, B, C), սպիտակուցներ, շաքարներ, ճարպեր, օրգանական թթուներ, սապոնիններ, ալկալոիդներ, աղաղանյութեր, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները՝ սննդի, պտուղները, սերմերը, տերևները, արմատների կեղևը՝ դեղագործական նպատակներով

Հավաքման ժամկետները	Պտուղները՝ աշնանը, մնացած մասերը՝ ողջ տարին
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կարող են կրճատվել բնակմիջավայրի կորստի պատճառով
Վտանգվածության աստիճանը	Պաշարները բնության մեջ խիստ սահմանափակ են
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր պտուղ
Մշակության համապատ. վայրը	Արարատի մարզում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Ջերմասեր, լուսասեր և չորադիմացկուն բույս է: Կարող է աճել աղքատ հողերում, բայց լավ արդյունք է տալիս պարարտ, ոռոգվող հողերում: Բազմացվում է սերմերով և պատվաստումով, կան կարծիքներ, որ կարելի է բազմացնել նաև կտրոնների արմատակալեցմամբ: Սերմերը կարելի է ցանել աշնանը կամ, ստրատիֆիկացիայից հետո՝ գարնանը: Վնասատուներ և հիվանդություններ քիչ ունի, սակայն պտուղները պետք է պաշտպանել թռչուններից: Համապատասխան միջատների բացակայության դեպքում կարելի է կիրառել արհեստական փոշոտում
Տեսակի ընտրության հիմնավորումը	Նոր, հեռանկարային տեսակ է հատկապես ցածրադիր վայրերում մշակության մեջ լայնորեն ներդնելու նպատակով և դրա պաշարների արդյունաբերական մասշտաբներով մշակումը կարիք ունի այս արժեքավոր բույսի նոր, բարձրարժեք սորտերի ներդրմանը
Դիտողություններ	

Ընտանիք	Rosaceae - Վարդագգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Amygdalus communis</i> L. 
Գրական անվանումը	Նշենի սովորական
Ժողովրդական անվանումը	Նուշ, նշի, բաղամ, շիպիճ, շիպիճի, շալիճ
Նկարագրությունը	Տերևաթափ, ճյուղառատ թուփ է կամ փոքր ծառ , 6-8 մ բարձր., տերևները պարզ են, սղոցաեզր, նշտարաձև, կլորավուն հիմքով, երկար սրածայր գագաթով, ծաղիկները մեկական են, մինչև 2.5 սմ տրամագծով, սպիտակ կամ բաց-վարդագույն պսակաթերթիկներով, պտուղները չոր, թավշապատ պտղամաշկով օվալ կորիզապտուղներ են, կորիզները՝ կնճռոտ կեղևով, մինչև 2-2.5 սմ երկար.
Աճման վայրը	Հայաստանում մշակվում է: Երբեմն հանդիպում է վայրաճ վիճակում
Տարածումը	Հարավային Կովկաս, Արևմտյան Միջերկրածովյան ավազան, Բալկաններ, Փոքր Ասիա, Իրան, Կենտրոնական Ասիա
Բույսի օգտագործումը	Սննդային, դեղագործական, մեղրատու, պարֆյումերային, գեղագարդային
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ, յուղեր, սպիտակուցներ, ածխաջրեր, եթերային յուղեր, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Սերմեր

Հավաքման ժամկետները	Հունիս-օգոստոս
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	-
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Անհրաժեշտ է ավելացնել մշակվող տարածքները
Մշակության համապատ. վայրը	Արարատի մարզում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Ջերմասեր, չորադիմացկուն, լուսասեր, արագած բույս է: Վատ է աճում ուժեղ քամիների դեպքում, ցրտահարվում է -15-20°C ջերմաստիճանների դեպքում, ծաղիկները հաճախ ցրտահարվում են վաղ գարնանային հետադարձ ցրտերից: Նշենին կարող է աճել աղքատ հողերում, բայց լավ արդյունք է տալիս պարարտ, չափավոր ոռոգվող, կրային հողերում: Բազմացվում է սերմերով, պատվաստումով, կանաչ և արմատային կտրոններով, անդալիսով, արմատային մացառներով
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին՝ ֆերմերների կողմից արդյունաբերական մասշտաբներով չի մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Rosaceae - Վարդագգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Armeniaca vulgaris</i> L. 
Գրական անվանումը	Ծիրանենի սովորական
Ժողովրդական անվանումը	Ծիրանի, ծիրան
Նկարագրությունը	Տերևաթափ, միջին, մինչև 10 մ բարձր. ծառ է: Երիտասարդ ճյուղերը կարմրավուն են, ծեր ճյուղերը՝ գորշ, մուգ, երկայնական ճեղքերով: տերևները պարզ են, լայն ձվաձև, սղոցաեզր, սրտաձև հիմքով, կարճ սրածայր գազաթով: Ծաղիկները մեկական են, 2-3 սմ տրամագծով, սպիտակ-վարդագույն ջղերով կամ վարդագույն պսակաթերթիկներով: Պտուղը հյութալի է՝ ծիրանագույն (դեղնա-կարմիր) թավշյա մաշկով, սերմերն ուտելի են (վայրի առանձնյակների սերմերը դառն են)
Աճման վայրը	Հայաստանում լայնորեն մշակվում է, ունի բազմաթիվ հնագույն սորտեր: Ըստ կարծիքների մեծամասնության՝ հանդիսանում է Հայաստանի ֆլորայի ներկայացուցիչ: Վայրի առանձնյակներն աճում են Արագած լեռան հարավային լանջերին
Տարածումը	Հայաստան, Ղազախստան, Կիրգիզիա, Ուզբեկստան, Հյուսիսային Չինաստան: Աշխարհում լայնորեն մշակվում է
Բույսի օգտագործումը	Սննդային, դեղագործական, մեղրատու, գեղազարդային, տեխնիկական
Կենսաբանական ակտիվ	Վիտամիններ (A, B, C), սպիտակուցներ, շաքարներ, ճարպեր, օրգանական թթուներ, բջջանյութ, հանքային աղեր և

նյութերը	այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները սննդի, ծաղիկները՝ դեղագործական նպատակով
Հավաքման ժամկետները	Հունիս-օգոստոս
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	-
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Անհրաժեշտ է ավելացնել մշակվող տարածքները
Մշակության համապատ. վայրը	Արարատի մարզում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Զերմասեր, լուսասեր, չորադիմացկուն, ուժեղ աճ ունեցող, երկարակյաց տեսակ է: Ցանկալի է աճեցնել ուժեղ քամիներից պաշտպանված տեղանքում: Լավ է աճում պարարտ, կրային հողերում: Բազմացվում է սերմերով և պատվաստումով: Ցանկալի է այգում ունենալ մի քանի սորտեր, որի դեպքում, խաչաձև փոշոտման արդյունքում, ավելի առատ բերք է ստացվում: Սաղարթը զբաղեցնում է բավականին մեծ մակերես, ինչի պատճառով նպատակահարմար է տնկումները կատարել 4x6 մ սխեմայով
Տեսակի ընտրության հիմնավորումը	Տեսակի պաշարների արդյունաբերական մասշտաբներով մշակումը կարիք ունի այս արժեքավոր բույսի նոր, բարձրարժեք, ցածրաճ, ինչպես նաև պտուղների տեղափոխման համար դիմացկուն սորտերի ստացմանը
Դիտողություններ	

Ընտանիք	Rosaceae - Վարդագգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Crataegus monogina</i> Jacq. (= <i>Crataegus oxyacantha</i> L.) 
Գրական անվանումը	Սգնի միասոնակ
Ժողովրդական անվանումը	Ալոճ, սնձնի, խագուրա, ալուչ
Նկարագրությունը	Տերևաթափ, փոքր, մինչև 3-6 մ բարձր. ծառ է: Բազմամյա ճյուղերը բաց մոխրավուն են, ընձյուղները՝ ձիթա- կամ կարմրադարչնագույն, փշերը մեծաքանակ չեն, 0.6-1.0 սմ երկար., տերևները պարզ են, հակառակ ձվաձև, բույթ գագաթով և սեպաձև հիմքով, 3-5 բլթակավոր, ատամնաեզր, 1.5-5 սմ երկար., ծաղիկները սպիտակ են կամ վարդագույն: Պտուղները էլիպսաձև են կամ գնդաձև, գորշ-կարմրավուն կամ կարմիր, 0.7-1.0 սմ երկար., 1 կորիզով
Աճման վայրը	Աճում է միայնակ կամ ոչ մեծ խմբերով, անտառեզրերին, թփուտներում, կիրճերի, գետահովիտների լանջերին, կարող է աճել սովերային պայմաններում, ծ. մ. մինչև 1800 մ բարձրություններում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Իջևանի և Սեվանի ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասում, Փոքր Ասիայում, Իրանում, Եվրոպայում, Հյուսիս-Արևմտյան Աֆրիկայում
Բույսի օգտագործումը	Սննդային, դեղագործական, մեղրատու և գեղազարդային
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (A, C, E, K), աղաղանյութեր, ածխաջրեր, հանքային աղեր, ֆլավոնոիդներ, օրգանական թթուներ և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները սննդի, ծաղիկները և մատղաշ ընձյուղները՝ դեղագործական նպատակներով

Հավաքման ժամկետները	Օգոստոս-սեպտեմբեր
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կարող են կրճատվել բնակմիջավայրի կորստի պատճառով
Վտանգվածության աստիճանը	Ունի սահմանափակ տարածում
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր սնունդ և դեղագործական հումք
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Լուսասեր, չորադիմացկուն, ցրտադիմացկուն, դանդաղած տեսակ է: Բազմանում է սերմերով (ստրատիֆիկացիայից հետո), պատվաստումով, կտրոններով, արմատային մացառներով և անդալիսով: Պահանջկոտ չէ հողերի նկատմամբ, կարող է աճել նաև քարքարոտ հողերում, սակայն կավային, կրային, խոնավ, լավ դրենաժով հողերում տալիս է բարձր աճ և բերք
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին՝ բնակչության կողմից սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Rosaceae - Վարդագգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Crataegus macracantha</i> Lodd ex Loudon   
Գրական անվանումը	Սգնի խոշորափուշ
Ժողովրդական անվանումը	Ալոճ, սնձնի, խագուրա, ալուչ
Նկարագրությունը	Տերևաթափ, փոքր, մինչև 4.5-6 բարձր. ծառ է, բազմամյա ճյուղերը բաց դարչնագույն կամ մոխրավուն են, ընձյուղները՝ շագանակագույն, փշերը բազմաթիվ են՝ 6-14 սմ երկար., տերևները պարզ են, լայն հակառակ ձվաձև կամ էլիպսաձև, բուրբ գագաթով և լայն սեպաձև կամ կլորավուն հիմքով, խոշոր ատամնաեզր, 5-7(10) սմ երկար.։ Ծաղկաբույլերը վահանաձև են, շատ ծաղիկներով, սպիտակ պսակաթերթերով։ Պտուղները գնդաձև են, վառ կարմիր, դեղին պտղամսով, 0.8-1.5 սմ երկար., 2-3 կորիզներով
Աճման վայրը	Լեռնալանջերի կրային հարուստ հողերում կամ գետահովիտներում
Տարածումը	Մշակվում է Հայաստանում, հայրենիքը Հարավային Կանադան և Միացյալ Նահանգներն են
Բույսի օգտագործումը	Մենդային, դեղագործական, գեղազարդային և կենդանի ցանկապատ
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (A, C, E, K), կարոտիններ, աղադանյութեր, ածխաջրեր, հանքային աղեր, ֆլավոնոիդներ, օրգանական թթուներ և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները սննդի, ծաղիկները և մատղաշ ընձյուղները՝ դեղագործական նպատակներով

Հավաքման ժամկետները	Մեպտեմբեր-հոկտեմբեր
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	-
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր միրգ
Մշակության համապատ. վայրը	Արարատի մարզում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Լուսասեր, չորադիմացկուն, ցրտադիմացկուն, բերքառատ տեսակ է: Բազմանում է սերմերով (աշնանը՝ միանգամից հողում, զարնանը՝ ստրատիֆիկացիայից հետո), պատվաստումով, կտրոններով, արմատային մացառներով և անդալիսով: Պահանջում է պարարտ, կավային ու կավաավազային, կրային, խոնավ, լավ դրենաժով հողեր
Տեսակի ընտրության հիմնավորումը	Նոր, հեռանկարային տեսակ է հանրապետությունում մշակության մեջ լայնորեն ներդնելու նպատակով
Դիտողություններ	

Ընտանիք	Rosaceae - Վարդագգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Crataegus pontica</i> K.Koch   
Գրական անվանումը	Սգնի պոնտական
Ժողովրդական անվանումը	Ալոճ, սնձնի, խագուրա, ալուչ
Նկարագրությունը	Տերևաթափ, 6-10 մ բարձր. ծառ է, բազմամյա ճյուղերը մուգ մոխրավուն են, ընձյուղները՝ մոխրագույն, թավոտ, փշերը՝ բացակայում են, տերևները պարզ են, կոշտ, ռոմբաձև կամ հակառակ լայն ձվաձև, երեք կամ հինգ բլթականի, բութ գագաթով և լայն սեպաձև հիմքով, 4.5-6.5 սմ երկար., ծաղկաբույլերը՝ 8-14 ծաղկանի, պսակաթերթերը սպիտակ են, պտուղները բևեռներից բավականին սեղմված են, դեղին, երբեմն կարմրավուն կողերով, 1.5-2.8 սմ տրամագծով., 2-3 կորիզներով
Աճման վայրը	Չոր, քարքարոտ լանջերին, ծ. մ. 600-1600 մ բարձրություններում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Երևանի և Մեղրու ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասի հարավ-արևելքում, Անատոլիայում, Իրանում, Կենտրոնական Ասիայում
Բույսի օգտագործումը	Սննդային, դեղագործական, մեղրատու, գեղազարդային և տեխնիկական
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (A, C, E, K), աղաղանյութեր, ածխաջրեր, հանքային աղեր, ֆլավոնոիդներ, օրգանական թթուներ և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները սննդի, ծաղիկները և մատղաշ ընձյուղները՝ դեղագործական նպատակներով

Հավաքման ժամկետները	Մեպտեմբեր-հոկտեմբեր
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կրիտիկական են
Վտանգվածության աստիճանը	Նկատվում է բնակմիջավայրի և բույսի առանձնյակների քանակի կրճատում
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր սնունդ
Մշակության համապատ. վայրը	Արարատի մարզում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Ջերմասեր, լուսասեր, չորադիմացկուն, բավականին խոշոր պտուղներով տեսակ է: Բազմանում է սերմերով (աշնանը՝ միանգամից հողում, գարնանը՝ ստրատիֆիկացիայից հետո), պատվաստումով, արմատային մացառներով և անդալիսով: Չնայած կարող է աճել չոր, քարքարոտ հողերում, սակայն պարարտ, կավային ու կավաավազային, կրային, խոնավ, լավ դրենաժով հողերում տալիս է բարձր աճ և առատ բերք
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին՝ բնակչության կողմից չի մշակվում, հավանաբար որպես հազվագյուտ տեսակ անհասանելի լինելու պատճառով
Դիտողություններ	

Ընտանիք	Rosaceae - Վարդագգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Cydonia oblonga</i> Mill. 
Գրական անվանումը	Մերկնիլենի
Ժողովրդական անվանումը	Մերկնիլ, սկևուլ
Նկարագրությունը	Տերևաթափ, 1.5-4(5) մ բարձր. թուփ կամ ծառ է, ճյուղերի կեղևը թեփուկանման անջատվող, մուգ մոխրագույն, ընձյուղների կեղևը՝ գորշ-մոխրագույն, թավոտ: Տերևները պարզ են, ամբողջաեզր, ձվաձև կամ օվալ, սրտաձև կամ լայն սեպաձև հիմքով, բուրբ կամ կարճ սրածայր գագաթով, վերնից կանաչ, ներքևից՝ մազմզուկապատ, 5-10 սմ երկար., ծաղիկները հիմնականում մեկական են, մինչև 4-5 սմ տրամագծով, բաց վարդագույն, պտուղը՝ կեղծ խնձոր է, վառ կամ մուգ դեղին, ամուր, տոփալ պտղամսով, խիստ բուրավետ
Աճման վայրը	Հայաստանում մշակվում է այգիներում:
Տարածումը	Վայրի վիճակում հանդիպում է Թալիշի լեռներում (Հարավ-Արևելյան Անդրկովկաս) և Կոպետդաղում (Թուրքմենստան): Աշխարհում լայնորեն մշակվում է
Բույսի օգտագործումը	Սննդային և դեղագործական
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ, օսլա, լորձեր, աղաղանյութեր, օրգանական թթուներ, ածխաջրեր, ճարպեր, էթերայուղեր, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները՝ սննդի, սերմերը և տերևները՝ դեղագործական նպատակով

Հավաքման ժամկետները	Մեպտեմբեր-հոկտեմբեր
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	-
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա տեղական սորտերը և բնակչությանը մատակարարել դիետիկ, բուժիչ, արժեքավոր միրգ
Մշակության համապատ. վայրը	Արարատի մարզում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Ջերմասեր (ոչ բավարար ցրտադիմացկուն), լուսասեր, խոնավության նկատմամբ պահանջկոտ, սակայն ամռան ամիսներին չորադիմացկուն բույս է: Հողերի նկատմամբ պահանջկոտ չէ, սակայն չի տանում խիստ հիմնային և ճահճային հողեր: Սերկնիլենին բազմանում է սերմերով, ձայտացած կտրոններով, պատվաստով, արմատային մացառներով
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին՝ բնակչության կողմից սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Rosaceae - Վարդագգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Prunus domestica</i> L. 
Գրական անվանումը	Սալորենի կուլտուրական
Ժողովրդական անվանումը	Սև սալոր, դամբուլ, սալոր, ճանճուլ
Նկարագրությունը	Տերևաթափ, միջին, 6-15 մ բարձր. ծառ է, երիտասարդ ճյուղերը կարմրադարչնագույն կամ դեղնականաչավուն, բազմամյա ճյուղերը՝ մուգ գորշամոխրավուն, ճաքճքված, տերևները պարզ են, էլիպսաձև կամ հակառակ ձվաձև, սղոցաեզր, 4-10 սմ երկար., ծաղիկները սպիտակ են, կորիզապտուղը հյութալի է, կլորավուն, էլիպսաձև, ձվաձև, մանուշակագույն, դեղին, կանաչ կամ կարմիր՝ կապտավուն խավով
Աճման վայրը	Հայաստանում լայնորեն մշակվում է այգիներում
Տարածումը	Հայտնի է միայն կուլտուրայում: Աշխարհում լայնորեն մշակվող կուլտուրաներից է
Բույսի օգտագործումը	Սննդային, դեղագործական, մեղրատու և գեղազարդային
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (A, B ₁ , B ₂ , C, P), ածխաջրեր, օրգանական թթուներ, հանքային աղեր, կորիզը պարունակում է ճարպեր
Բույսի հավաքվող մասերը	Պտուղերը՝ սննդի, սերմերը՝ դեղագործական նպատակով
Հավաքման ժամկետները	Հուլիս-հոկտեմբեր

Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	-
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Տեսակի պաշարների արդյունաբերական մասշտաբներով մշակումը կարիք ունի այս արժեքավոր բույսի նոր, բարձրարժեք սորտերի ներդրմանը
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Զերմասեր, ցրտադիմացկուն, խոնավասեր, բերքառատ տեսակ է, որը հնագույն ժամանակներում ստացվել է մամխենու և շլորենու խաչասերումից: Լավ է աճում խոնավ, ավազակավային, և պարարտ կավային հողեր: Վատ է տանում օդի չորությունը, նախընտրում է ոչ քամոտ տեղավայրեր: Բազմանում է արմատային մացառներով, կտրոններով, պատվաստմամբ, անդալիսով: Նախընտրելի է ծառերի հեռավորության 4x6 մ սխեման
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին՝ ֆերմերների կողմից արդյունաբերական մասշտաբներով չի մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Rosaceae - Վարդագգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Prunus spinosa</i> L. 
Գրական անվանումը	Սալոր փշավոր
Ժողովրդական անվանումը	Մամխի, մամոխ
Նկարագրությունը	Տերևաթափ թուփ է կամ փոքր, 3.5-4.5(8) մ բարձր. ծառ: Ճյուղերը մոխրագույն կամ գորշա-մոխրագույն են, խիստ փշոտ, տերևները պարզ են, էլիպսաձև կամ ձվաձև, սրոցաեզր կլորավուն հիմքով, կարճ սրածայր զագաթով: Ծաղիկները մանր են, մեկական կամ երկուական, սպիտակ, կորիզապտուղը հյութալի է, տտիպ համով, կապտավուն, մուգ կապտավուն խավով, 1-2 սմ տրամագծով
Աճման վայրը	Աճում է մինչև միջին լեռնային գոտին՝ անտառեզրերին, թփուտներում, գետահովիտներում՝ երբեմն առաջացնելով բավականին խիտ թփուտներ
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Լոռու, Իջևանի, Ապարանի, Երևանի, Դարալագեզի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասի մեծ մասում, Եվրոպայում
Բույսի օգտագործումը	Սննդային, դեղագործական, մեղրատու, տեխնիկական, հողապաշտպան և գեղազարդային
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (B ₁ , B ₂ , C, PP, E), պեկտինային նյութեր, ածխաջրեր, օրգանական թթուներ, հանքային աղեր: Կորիզը պարունակում է ճարպեր
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները՝ սննդի, պտուղները և տերևները՝ դեղագործական նպատակով

Հավաքման ժամկետները	Մեպտեմբեր-նոյեմբեր
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կրճատվում են
Վտանգվածության աստիճանը	Նկատվում է բնակմիջավայրի կրճատում
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները, ինչպես նաև հնադարյան սորտերը մշակության մեջ
Մշակության համապատ. վայրը	Արարատի մարզում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Ջերմասեր, լուսասեր, ցրտադիմացկուն, չորադիմացկուն տեսակ է: Գերադասում է չեզոք, ավազակավային, ջրաթափանց և օդաթափանց հողեր: Ոչ պահանջկոտ տեսակ է: Բազմանում է արմատային մացառներով (բավականին ագրեսիվ է), կտրոններով, պատվաստմամբ
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին, բնակչության կողմից սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Rosaceae - Վարդագգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Pyrus caucasica</i> Fed. 
Գրական անվանումը	Տանձենի կովկասյան
Ժողովրդական անվանումը	Տանձի, պանդա
Նկարագրությունը	Տերևաթափ, 20-25(30) մ բարձր. խոշոր ծառ է, ճյուղերը մոխրագույն են, փշոտ, տերևները պարզ են, կլորավուն, լայն ձվաձև կամ մի փոքր երկարավուն, ամբողջաեզր կամ մանր ատամնաեզր, 3-5 սմ երկար., ծաղիկները խոշոր են, ձնասպիտակ, 3,5 սմ տրամագծով, երբեմն՝ բաց վարդագույն, հավաքված վահանակներում, պտուղը՝ կլոր է կամ սեղմված բևեռներից, 1.5-3 սմ տրամագծով, կանաչ, դեղնավուն կամ թեթև կարմրավուն, հասունանալիս՝ գորշ
Աճման վայրը	Տերևավոր անտառներում, գետահովիտներում, կիրճերի լանջերին, ստորինից վերին լեռնային գոտիներում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Վերին Ախուրյանի, Լոռու, Իջևանի, Ապարանի և Զանգեզուրի ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասի մեծ մասում
Բույսի օգտագործումը	Սննդային, դեղագործական, մեղրատու և տեխնիկական
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ, ածխաջրեր, օրգանական թթուներ, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները՝ սննդի և դեղագործական նպատակով

Հավաքման ժամկետները	Մեպտեմբեր-հոկտեմբեր
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կարող են կրճատվել բնակմիջավայրի կորստի պատճառով
Վտանգվածության աստիճանը	Ինտենսիվորեն հավաքվում է բնակչության կողմից օգտագործման և վաճառքի համար
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր միրգ
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Լուսասեր, սովերատար, ցրտադիմացկուն, բարձր ծառ է: Պահանջկոտ չէ հաղերի նկատմամբ, սակայն լավ է աճում փուխր, պարարտ, կավային և ավազակավային խորը հողերում: Լավ է բազմանում սերմերով, ունի բազմազան ձևեր, որոնք բազմացվում են պատվաստումով և կտրոններով
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին՝ բնակչության կողմից սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Rosaceae - Վարդագգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Pyrus sosnovskyi</i> Fed. 
Գրական անվանումը	Տանձենի Սոսնովսկու
Ժողովրդական անվանումը	Տանձի, պանդա
Նկարագրությունը	Տերևաթափ թուփ է կամ փոքր ծառ, 2-3 մ բարձր., ճյուղերը կարմրավուն կամ դարչնագույն են, փշոտ, տերևները պարզ են, մանր, շեղանկյունաձև կամ էլիպսաձև, ամբողջաեզր կամ մանր սղոցաեզր, 2-3 սմ երկար., մերկ, վերևից՝ փայլուն, ներքևից՝ անփայլ, ծաղիկները խոշոր են, սպիտակ, պտուղները մանր են, կանաչ
Աճման վայրը	Լեռնալանջերին, գիհու նոսրանտառներում, միջին լեռնային գոտում
Տարածումը	Հայաստանի էնդեմ է, հանդիպում է Գեղամի, Երևանի (Գառնի գետի հովտում), Դարեղեգիսի (Վարդենյաց լեռնանցք) և Զանգեզուրի ֆլորիստիկ շրջաններում
Բույսի օգտագործումը	Սննդային, դեղագործական և մեղրատու
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ, ածխաջրեր, օրգանական թթուներ, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները՝ սննդի և դեղագործական նպատակով
Հավաքման ժամկետները	Սեպտեմբեր-հոկտեմբեր

Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կարող են կրճատվել բնակմիջավայրի կորստի պատճառով
Վտանգվածության աստիճանը	Ունի սահմանափակ տարածում
Պահպանության միջոցառումները	Պահպանվում է Խոսրովի պետական արգելավայրում, սակայն տեսակի պոպուլյացիաները պահպանելու համար անհրաժեշտ է նաև ներդնել մշակության մեջ
Մշակության համապատ. վայրը	Արարատի մարզում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Զերմասեր, լուսասեր, չորադիմացկուն, աճման պայմանների նկատմամբ ոչ պահանջկոտ փոքր ծառ կամ թուփ է: Գերադասում է կրային, ավազակավային, ջրաթափանց և օդաթափանց հողեր: Բազմաճյուղ է սերմերով: Մշակության մեջ փորձարկման կարիք ունի
Տեսակի ընտրության հիմնավորումը	Նոր, հեռանկարային տեսակ է հանրապետությունում՝ մշակության մեջ լայնորեն ներդնելու նպատակով
Դիտողություններ	

Ընտանիք	Rosaceae - Վարդագգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Pyrus zangezura</i> Maleev 
Գրական անվանումը	Տանձենի զանգեզուրի
Ժողովրդական անվանումը	Տանձի, պանդա
Նկարագրությունը	Տերևաթափ, 8-10 մ բարձր. փոքր ծառ է: Ճյուղերը զուրկ են փշերից, մուգ դարչնագույն են, հետագայում՝ մոխրագույն, տերևները պարզ են, էլիպսաձև, լայն նշտարաձև կամ երկարավուն ձվաձև, սղոցաեզր կամ ասամնաեզր, 3-4 սմ երկար.: Ծաղիկները խոշոր են, սպիտակ, 3 սմ տրամագծով, հավաքված սակավածաղիկ վահանակներում, պտուղը՝ կլորավուն կամ տանձանման, մինչև 2 սմ տրամագծով, մուգ դարչնագույն, հաստ, երկար պտղակոթով
Աճման վայրը	Աճում է վերին լեռնային գոտում, տերևավոր անտառների բացատներում կամ անտառեզրերին
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանի էնդեմ է
Բույսի օգտագործումը	Սննդային, դեղագործական, մեղրատու և տեխնիկական
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ, ածխաջրեր, օրգանական թթուներ, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները՝ սննդի և դեղագործական նպատակով
Հավաքման ժամկետները	Օգոստոս-սեպտեմբեր

Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կարող են կրճատվել բնակմիջավայրի կորստի պատճառով
Վտանգվածության աստիճանը	Ունի սահմանափակ բնակմիջավայր
Պահպանության միջոցառումները	Լայնորեն մշակվում է Գեղի գետի հովտում: Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր պտուղ
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Լուսասեր, չորադիմացկուն, ցրտադիմացկուն ծառ է: Գերադասում է հիմնային, ավազակավային, ջրաթափանց և օդաթափանց պարարտ հողեր: Բազմանում է սերմերով: Մշակության մեջ փորձարկման կարիք ունի
Տեսակի ընտրության հիմնավորումը	Նոր, հեռանկարային տեսակ է՝ հանրապետությունում մշակության մեջ լայնորեն ներդնելու նպատակով
Դիտողություններ	

Ընտանիք	Rosaceae - Վարդագգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Rosa canina</i> L. 
Գրական անվանումը	Մասրենի շան
Ժողովրդական անվանումը	Մասրի, շնավարդենի, շնավարդ, շան մորի, մասրավարդ, փշավարդ
Նկարագրությունը	Տերևաթափ, թուփ է մինչև 3 մ բարձր., աղեղնաձև թեքված կանաչ կամ գորշակարմրավուն ճյուղերով և ամուր, նոսր փշերով: Տերևները բարդ են, 7-9 սմ երկար., տերևիկները 5-7 հատ են, մերկ, սուր կրկնակի ատամնաեզր: Ծաղիկները խոշոր են, վարդագույն կամ սպիտակ, պտուղը օվալ երկարավուն է կամ կլորավուն, հարթ, կարմիր
Աճման վայրը	Անտառեզրերին, թփուտներում, հիմնականում միջին լեռնային գոտում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Ապարանի, Երևանի, Դարալագեզի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասում, Եվրոպայում, Փոքր Ասիայում
Բույսի օգտագործումը	Մանդային և դեղագործական
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (A, C, B1, B2, K, P), պեկտիններ, ածխաջրեր, եթերայուղեր, աղաղանյութեր, օրգանական թթուներ, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները
Հավաքման ժամկետները	Սեպտեմբեր-հոկտեմբեր

Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ համեմատաբար հաստատուն են
Վտանգվածության աստիճանը	Վտանգ չի սպառնում, չնայած ինտենսիվորեն հավաքվում է բնակչության կողմից՝ օգտագործման և վաճառքի համար
Պահպանության միջոցառումները	Տեսակի մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր պտուղ
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Լուսասեր, սովերատար, ցրտադիմացկուն, ոչ պահանջկոտ թուփ է: Աճում է բոլոր տիպի հողերում: Բազմացվում է սերմերով (աշնանը՝ ցանելով միանգամից հողում, կամ գարնանը՝ ստրատիֆիկացիայից հետո) և կտրոններով (երիտասարդ կանաչ կտրոնները վերցնում են ամռանը)
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին՝ բնակչության կողմից չի մշակվում
Դիտողություններ	

Ընտանիք	Rosaceae - Վարդագգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Rosa haemisphaerica</i> Herrm. 
Գրական անվանումը	Մասրենի կիսագնդաձև
Ժողովրդական անվանումը	Մասրի, մասրավարդ, փշավարդ
Նկարագրությունը	Տերևաթափ, թուփ է՝ 1-2 մ բարձր., ուղիղ կամ թեթև աղեղնաձև թեքված գորշակարմրավուն ճյուղերով և կեռ, բազմաթիվ մանր, բարակ փշերով: Տերևները բարդ են, 5-7 սմ երկար., տերևիկները 5-7 հատ են, հիմքում սեպաձև սեղմված, հակառակ ձվաձև, ատամնաեզր: Ծաղիկները խոշոր են, ծծմբադեղին, պտուղը կիսագնդաձև է կամ բևեռներից սեղմված, դեղին կամ դեղնակարմրավուն
Աճման վայրը	Այգիներում, բնակավայրերի և վանքերի շրջակայքում, հիմնականում միջին լեռնային գոտում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Երևանի և Դարալագեզի ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասում, փոքր Ասիայում, Իրանում
Բույսի օգտագործումը	Մանդային և դեղագործական
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (A, C, B), ածխաջրեր, հանքային աղեր, օրգանական թթուներ և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները

Հավաքման ժամկետները	Հունիս-օգոստոս
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կրճատվում են
Վտանգվածության աստիճանը	Ունի սահմանափակ տարածում
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր պտուղ
Մշակության համապատ. վայրը	Արարատի մարզում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Լուսասեր, սովերատար, ջերմասեր, ցրտադիմացկուն, ոչ պահանջկոտ թուփ է: Լավ է աճում հիմնային, հումուսով հարուստ, ջրաթափանց և օդաթափանց հողերում: Բազմացվում է սերմերով, թփերի կիսումով, արմատային մացառներով (տալիս է լավագույն արդյունք), կտրոններով
Տեսակի ընտրության հիմնավորումը	Հեռանկարային տեսակ է՝ հանրապետությունում մշակության մեջ լայնորեն ներդնելու նպատակով
Դիտողություններ	Նախկինում լայնորեն մշակվել է վանքապատկան հողերում

Ընտանիք	Rosaceae - Վարդագգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Rubus idaeus</i> L. 
Գրական անվանումը	Ազնվամորի
Ժողովրդական անվանումը	Մորենի, մոռ
Նկարագրությունը	Տերևաթափ, մինչև 2-2.5 մ բարձր. կիսաթուփ է, ճյուղերը երկամյա են, գլանաձև, ուղղաձիգ, խոնարհված գազաթներով (առաջին տարին աճած ճյուղերը պտղաբերում են հաջորդ տարի և մահանում վեգետացիայի վերջում): Տերևները բարդ են՝ կենտ փետրաձև, 3-7 անհավասար սղոցաեզր տերևիկներով, վերևից մերկ, ներքևից՝ սպիտակ թաղիքանման մազմզուկածածկ, պտղաբերող ընձյուղների վրա տերևները եռամաս են: Ծաղիկները սպիտակ են, մինչև 1 սմ տրամագծով, հավաքված ծայրային վահանաձև ծաղկաբույլերում, պտուղները գնդաձև կամ ձվաձև են, կարմիր, երբեմն՝ դեղին
Աճման վայրը	Անտառներում, անտառեզրերին, բացատներում, թփուտներում, մարգագետիններում, չինգիլներում, ծ. մ. 600-2000 մ բարձրություններում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Վերին Ախուրյանի, Լոռու, Իջևանի, Արագածի և Սևանի ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասում, Անատոլիայում, Եվրոպայում, Սիբիրում, Կենտրոնական Ասիայում
Բույսի օգտագործումը	Սննդային և դեղագործական

Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (A, B, C), ածխաջրեր, եթերայուղեր, լորձանյութեր, օրգանական թթուներ, հանքային աղեր, սերմերը՝ ճարպեր, և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները՝ սննդի, պտուղները և տերևները՝ դեղագործական նպատակով
Հավաքման ժամկետները	Հունիսից մինչև ցրտահարությունների սկիզբը
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կարող են կրճատվել բնակմիջավայրի կորստի պատճառով
Վտանգվածության աստիճանը	Ինտենսիվորեն հավաքվում է բնակչության կողմից օգտագործման և վաճառքի համար
Պահպանության միջոցառումները	Անհրաժեշտ է ավելացնել մշակվող տարածքները
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Լուսասեր, սովերատար, ցրտադիմացկուն թուփ է: Լավ է աճում խոր, ավազակավային և ենթակավային, հումուսով հարուստ, ջրաթափանց և օդաթափանց հողերում: Ցանկալի է ազնվամորին տնկել և վերատնկել վաղ գարնանը: Հարկավոր է նոսրացնել խիտ տնկարկները: Ցողունները կարող են հասնել մինչև 2-2,5 մ երկարության, որոնք անհրաժեշտ է կապել սյուների վրա հորիզոնական ամրացված լարերին
Տեսակի ընտրության հիմնավորումը	Տեսակի պաշարների արդյունաբերական մասշտաբներով մշակումը կարիք ունի այս արժեքավոր բույսի նոր, բարձրարժեք սորտերի ներդրմանը
Դիտողություններ	

Ընտանիք	Rosaceae - Վարդագգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Rubus fruticosus</i> 'Thornfree' 
Գրական անվանումը	Մոշենի թփային 'Անփուշ'
Ժողովրդական անվանումը	Մոշ, մոշի
Նկարագրությունը	Հիբրիդ է մոշենու և ագնվամորու միջև, ստեղծվել է անփուշ մոշենու ստացման նպատակով: Տերևաթափ, մինչև 5 մ երկար. ճյուղերով կիսաթուփ է, ճյուղերը երկամյա են, փովող (առաջին տարին աճած ճյուղերը պտղաբերում են հաջորդ տարի և մահանում վեգետացիայի վերջում): Տերևները բարդ են՝ կենտ փետրաձև, մուգ կանաչ: Ծաղիկները սպիտակ-վարդագույն են, մինչև 4 սմ տրամագծով: Պտուղները սև են, խոշոր, մինչև 3 սմ տրամագծով
Աճման վայրը	Ագրոկուլտուրա է
Տարածումը	Հայաստանում երբեմն մշակվում է ցածրադիր վայրերում: Հայաստանից դուրս լայնորեն մշակվում է
Բույսի օգտագործումը	Մսնդային և դեղագործական
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (A, B ₆ , B ₁₂ , C, D), սպիտակուցներ, ածխաջրեր, ճարպեր, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները՝ սննդի և դեղագործական նպատակով

Հավաքման ժամկետները	Հուլիս-հոկտեմբեր
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	-
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Անհրաժեշտ է ավելացնել մշակվող տարածքները
Մշակության համապատ. վայրը	Արարատի մարզի ցածրադիր համայնքներում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Զերմասեր, ցրտադիմացկուն, լուսասեր, սովերատար թուփ է: Գերադասում է լավ դրենաժով, միջին պարարտության, չեզոք հողեր: Անփուշ թփային մոշենին բազմացվում է սերմերով, կանաչ կամ փայտացած կտրոններով, անդալիսով (տալիս է լավագույն արդյունք), արմատային ընձյուղներով: Ցողունները կարող են հասնել մինչև 5 մ երկարության, որոնք անհրաժեշտ է կապել սյուների վրա հորիզոնական ամրացված լարերին
Տեսակի ընտրության հիմնավորումը	Նոր, հեռանկարային տեսակ է՝ հատկապես ցածրադիր վայրերում մշակության մեջ լայնորեն ներդնելու նպատակով
Դիտողություններ	

Ընտանիք	Urticaceae - Եղինջազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Urtica dioica</i> L. 
Գրական անվանումը	Եղինջ երկտուն
Ժողովրդական անվանումը	Եղիճ հյուսկեն, դնջի, ռամի
Նկարագրությունը	Բազմամյա կոճղարմատավոր, երկտուն խոտաբույս է: Ցողունը՝ ուղիղ, քառակող, մինչև 2 մ բարձր.: Տերևները սուր եռանկյունաձև են, սրտաձև հիմքով և սղոցաձև եզրով: Ծաղիկները՝ մանր են, կանաչ, հավաքված կախվող հուրաններում: Սերմերը՝ ձվաձև են, սեղմված, սուր եզրագծերով
Աճման վայրը	Անտառեզրերին, խոնավ, ստվերոտ վայրերում, աղբոտ վայրերում, բարձրախոտերում, բնակավայրերին մոտ, այգիներում, միջին և վերին լեռնային գոտիներում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է ամենուրեք: Հայաստանից դուրս՝ Կովկասի մեծ մասում, Իրանում, Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանում, Փոքր Ասիայում, Սիբիրում, Հեռավոր Արևելքում, Կենտրոնական Ասիայում
Բույսի օգտագործումը	Մսնդային, տեխնիկական և դեղագործական
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (ասկորբինաթթու, B, K), կարոտիններ, սպիտակուցներ, ճարպեր, ֆենոլային թթուներ, օրգանական թթուներ, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Մատղաշ ընձյուղները՝ սննդի, վերգետնյա մասը՝ կերային, արմատները և պտուղները՝ դեղագործական, ցողունները,

	տերևները և արմատները՝ տեխնիկական նպատակներով (ներկատու, թելի արտադրություն)
Հավաքման ժամկետները	Վաղ գարնանից սկսած՝ մոտ երեք ամիս
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարներին վտանգ չի սպառնում
Վտանգվածության աստիճանը	Վտանգ չի սպառնում, չնայած ինտենսիվորեն հավաքվում է բնակչության կողմից օգտագործման և վաճառքի համար
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր մշակաբույս
Մշակության համապատ. վայրը	Արարատի և Գեղարքունիքի մարզերում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Սովերատար, խոնավասեր, ցրտադիմացկուն բազմամյա խոտաբույս է: Նախընտրում է պարարտ, ոչ ծանր, միջին խոնավության, թույլ թթվային (Ph – 5-6) կամ չեզոք հողեր: Լավ է աճում լքված հողերում, տների, ֆերմաների մերձակայքերում: Բազմացվում է սերմերով (ցանում են ուշ աշնանը կամ վաղ գարնանը) և վեգետատիվ (թփերի կիսամաք, կոճղարմատների հատվածներով) եղանակով
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին, բնակչության կողմից սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	

Լրացուցիչ տեսակներ, որոնք կարող են մշակվել Սյունիքի և Տաուշի մարզերի ցածրադիր համայնքներում

Ընտանիք	Actinidiaceae - Ակտինիդիազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Actinidia chinensis</i> Planch   
Գրական անվանումը	Ակտինիդիա չինական
Ժողովրդական անվանումը	Կիվի
Նկարագրությունը	Բնափայտավոր լիանա է՝ մինչև 14 մ երկարությամբ և 2-5 սմ տրամագծով ցողուններով: Տերևները պարզ են, ատամնաեզր, մինչև 13 սմ երկարությամբ: Բույսը երկտուն է, ծաղիկները՝ միասեռ, պտուղը՝ հատապտուղ: Վայրի պտուղները փոքր են, կանաչ, իսկ մշակովի պտուղները խոշոր են, շագանակագույն, թավոտ մաշկով, կանաչ (որոշ սորտերինը՝ դեղին) միջուկով, մինչև 100 գր քաշով
Աճման վայրը	Հայաստանում միայն մշակության մեջ
Տարածումը	Հայաստանում մշակության մեջ ներմուծված տեսակ է: Վայրի վիճակում տարածված է Հեռավոր Արևելքում, Սախալինում, Չինաստանում, Կորեայում: Հիմնականում մշակվում է Նոր Զելանդիայում, Լատինական Ամերիկայում, Միջերկրածովյան ավազանում՝ Եվրոպայի հարավում, Փոքր Ասիայում և այլն: Առավել խոշոր արտահանողներն են Իտալիան և Նոր Զելանդիան
Բույսի օգտագործումը	Մսնդային և դեղագործական

Կենսաբանական ակտիվ նյութերը	Ունի C վիտամինի չափազանց մեծ պարունակություն: հարուստ է E, B2, B3, B6 վիտամիններով, բետա-կարոտինով, ֆոլաթթվով, հանքային տարրերով (կալիում, ֆոսֆոր, մագնեզիում) և ֆլավոնոիդներով: Պարունակում է էնզիմներ, մրգաթթու և պեկտիններ
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները
Հավաքման ժամկետները	Պտուղները հավաքում են ուշ աշնանը
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Տարեցտարի ավելանում են բույսը մշակող անհատները
Վտանգվածության աստիճանը	-----
Պահպանության միջոցառումները	Անհրաժեշտ է մեծացնել մշակվող տարածքները
Մշակության համապատ. վայրը	Սյունիքի և Տավուշի մարզերի ցածրադիր համայնքներում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Ջերմասեր, սովորատար լիանա է: Բազմացվում է սերմերով և կտրոններով: Տնկումը ցանկալի է կատարել գարնանը՝ նախորոք պատրաստված 60-70 լայնության, 40-60 սմ խորության փոսերի մեջ, իրարից 1.5-2.5մ հեռավորության վրա: Յուրաքանչյուր 10-15 իգական բույսերի հետ հարկավոր է տնկել մեկ կամ երկու արական բույս, տնկիների մեծանալուն զուգընթաց անհրաժեշտ է հենասյուներ դնել
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած, որ այս մշակաբույսը հեշտ է աճեցվում և ունի բացառիկ մեծ պահանջարկ: Հայաստանում դրա մշակումը սահմանափակ տարածում ունի
Դիտողություններ	

Ընտանիք	Ebenaceae - Էբենազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Diospyros kaki</i> L. 
Գրական անվանումը	Խուրմա արևելյան
Ժողովրդական անվանումը	Ժորենի
Նկարագրությունը	Տերևաթափ, միատուն, մինչև 10-12 մ բարձր. ծառ է, կան նաև երկտուն կուլտուրաներ. տերևները պարզ են, հերթադիր, ձվաձև կամ երկարավուն ձվաձև, ամբողջաեզր: Ծաղկում է մայիս-հունիսին, արական ծաղիկներն ունեն 16 առէջ, իգական ծաղիկները՝ 8 վարսանդ, կան նաև երկսեռ ծաղիկներ, պտուղները դեղին, գորշ-դեղնավուն, նարնջագույն, կարմրավուն՝ խնձորի մեծության հատապտուղներ են, չհասունացած պտուղները պարունակում են մեծ քանակությամբ տանիններ, հասունացած պտուղներում դրանք անհետանում են
Աճման վայրը	Հայաստանում միայն մշակովի է
Տարածումը	Մշակվում է Իջևանի և Մեղրու ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս աճում է Չինաստանում, Հարավային Կորեայում և Ճապոնիայում
Բույսի օգտագործումը	Սննդային
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (Բետա կարոտին՝ A պրովիտամին), սպիտակուցներ, ածխաջրեր, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները

Հավաքման ժամկետները	Տերևաթափի ընթացքում՝ հոկտեմբեր-նոյեմբերին
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	-
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա արժեքավոր սորտերը և բնակչությանը մատակարարել դիետիկ, բուժիչ, արժեքավոր միրգ
Մշակության համապատ. վայրը	Սյունիքի և Տավուշի մարզերի ցածրադիր համայնքներում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Երկարակյաց, լուսասեր, ջերմասեր կուլտուրա է, սակայն վատ է տանում օդի չորությունն ու շոգը: Բազմանում է ստրատիֆիկացված սերմերով և աչքապատվաստով՝ կովկասյան խուրմայի սերմնաբույսերի վրա, ընդ որում սերմերից աճեցված ծառը ավելի դիմացկուն է, սակայն ուշ է անցնում բերքատվության, իսկ պատվաստած ծառը սկսում է պտղաբերել 2-3 տարի հետո
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած մշակվում է ֆերմերների կողմից, սակայն արդյունաբերական մասշտաբների այն դեռևս չի հասնում
Դիտողություններ	

Ընտանիք	Moraceae - Թթազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Ficus carica</i> L. 
Գրական անվանումը	Թզենի սովորական
Ժողովրդական անվանումը	Թուզ, թզի
Նկարագրությունը	Տերևաթափ, մինչև 10 մ բարձր., կաթնահյութ ունեցող երկտուն թփեր կամ ծառեր են: Ճյուղերը՝ բաց-մոխրագույն կեղևով, տերևները պարզ են, կոշտ, խոշոր, 3-5-7 բլթականի, վերնից՝ կոշտ, ներքևից՝ թավոտ, ծաղիկները նստած են սնամեջ, գերաճած ծաղկաբույլերի ներսում (սիկոնիումներում), պտղաբույլը հյութալի է, տանձանման, ներսում տեղադրված ընկուզիկներով, սպիտակ, կանաչ, դեղնավուն կամ սևակապույտ գունավորմամբ
Աճման վայրը	Ստորին լեռնային գոտում՝ չոր, կրային, հիմնականում հարավային լանջերին, գետահովիտներում և կիրճերում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Իջևանի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Անդրկովկասում, Փոքր Ասիայում, , Իրանում, Աֆղանստանում, Կենտրոնական Ասիայում, Հնդկաստանում
Բույսի օգտագործումը	Մանդային և դեղագործական
Կենսաբանական ակտիվ նյութերը	Գլյուկոզա, ֆրուկտոզա, օրգանական թթուներ, աղաղանյութեր, սպիտակուցներ, ճարպեր, վիտամիններ և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները
Հավաքման ժամկետները	Սեպտեմբեր-հոկտեմբեր

Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կարող են կրճատվել բնակամիջավայրի կորստի պատճառով
Վտանգվածության աստիճանը	Պտուղները հավաքվում են բնակչության կողմից օգտագործման և վաճառքի համար: Կրճատվում է բնակամիջավայրը
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր միրգ
Մշակության համապատ. վայրը	Սյունիքի և Տավուշի մարզերի ցածրադիր համայնքներում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Ջերմասեր, համեմատաբար ցրտադիմացկուն, խոնավասեր, համեմատաբար չորադիմացկուն, լուսասեր, ոչ պահանջկոտ բույս է: Վատ է տանում ուժեղ քամիները: Ցրտահարվելուց հետո արագ վերականգնում է վերգետնյա մասը: Հարմարվում է զանազան տիպի հողերում, պահանջում է լավ դրենաժ: Բազմացվում է կտրոններով, արմատային մացառներով, անդալիսով
Տեսակի ընտրության հիմնավորումը	Տեսակի պաշարների արդյունաբերական մասշտաբներով մշակումը կարիք ունի նոր, բարձրարժեք սորտերի ներդրմանը
Դիտողություններ	

Ընտանիք	Oleaceae - Զիթենազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Olea europaea</i> L. 
Գրական անվանումը	Զիթենի Եվրոպական
Ժողովրդական անվանումը	Զեյթուն, յեղենի
Նկարագրությունը	Մշտադալար, մինչև 10-12 մ բարձր. ծառ է, կեղևը կանաչա-մոխրագույն, հարթ, ծեր ճյուղերը՝ հոդվածավոր, տերևները պարզ են, հակադիր, նշտարաձև, էլիպսաձև, ձվաձև կամ հակառակ ձվաձև, ամբողջաեզր, 5-8 սմ երկար., վերականգնվում են 2-3 տարին մեկ: Ծաղկաբույլերը պարզ են, մեկական կամ համարյա հուրանավոր, պտուղները միասերմ կորիզապտուղներ են, գնդաձև կամ երկարավուն, 2-4 սմ երկար., մինչև հասունանալը՝ ամուր և կանաչ, հետագայում՝ կանաչավուն, սպիտակավուն կամ մանուշակագույն
Աճման վայրը	Քիչ քանակով մշակվում է Հայաստանի տաք, ցածրադիր վայրերում
Տարածումը	Վայրի վիճակում տարածված է Միջերկրածովյան ավազանի հարավ-արևելյան մասերում
Բույսի օգտագործումը	Սննդային, դեղագործական, տեխնիկական
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (C, D, E), կարոտիններ, սպիտակուցներ, օրգանական յուղեր, ճարպեր, հանքային աղեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները սննդի և դեղագործական, տերևները՝ դեղագործական, պտուղները և բնափայտը՝ տեխնիկական

	նպատակով
Հավաքման ժամկետները	Պտուղները՝ սեպտեմբերից-դեկտեմբեր, տերևները՝ բույսի ծաղկման շրջանում
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	-
Վտանգվածության աստիճանը	-
Պահպանության միջոցառումները	Անհրաժեշտ է ավելացնել մշակվող տարածքները
Մշակության համապատ. վայրը	Սյունիքի և Տավուշի մարզերի ցածրադիր համայնքներում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Ջերմասեր, չորադիմացկուն, երկարակյաց ծառ է: Կարող է դիմանալ կարճատև՝ մինչև -10°C սառնամանիքի: Աում է մեղմ, անձրևոտ ձմեռ և չոր, շոգ ամառ ունեցող վայրերում: Ծառերը աճեցնում են իրարից բավական մեծ հեռավորության վրա, քանի, որ արմատային համակարգը փոված է և կարող է մի քանի անգամ մեծ պրոյեկցիա ունենալ բույսի սաղարթից: Լավ է աճում քարքարոտ-ավազային, կրային հողերում
Տեսակի ընտրության հիմնավորումը	Նոր, հեռանկարային տեսակ է հատկապես ցածրադիր վայրերում մշակության մեջ լայնորեն ներդնելու նպատակով
Դիտողություններ	

Ընտանիք	Punicaceae - Նոնազգիներ
Գիտական անվանումը (տեսակ)	<i>Punica granatum L.</i> 
Գրական անվանումը	Նոնենի
Ժողովրդական անվանումը	Նուռ, նոնի
Նկարագրությունը	Տերևաթափ, մինչև 6-12 մ բարձր., փշոտ, բազմաթիվ ճյուղերով ծառ է: Տերևները պարզ են, ամբողջաեզր, կլոր կամ սեպաձև հիմքով, կարճ սրածայր գազաթով, մերկ մակերեսով: Ծաղիկները տարասեռ են՝ մեկական կամ երկուական, խոշոր, նարնջագույն-կարմիր, վառ կարմիր, 4 սմ տրամագծով: Պտուղները գնդաձև են, մինչև 10-12 սմ տրամագծով, կոշտ պտղակցի մեջ պարփակված բազմաթիվ հյութալի, քաղցրաթթվաշ սերմերով
Աճման վայրը	Ստորին լեռնային գոտում, չոր, արևահայաց լանջերին, կիրճերում, սովորաբար պաշտպանված վայրերում
Տարածումը	Հայաստանում հանդիպում է Իջևանի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանից դուրս՝ Կովկասում, Փոքր Ասիայում, Իրանում, Աֆղանստանում
Բույսի օգտագործումը	Մենդային և դեղագործական
Կենսաբանական ակտիվ նյութերը	Վիտամիններ (C, B ₁ , B ₂ , B ₆ , B ₁₂), սպիտակուցներ, ճարպեր, ածխաջրեր, օրգանական թթուներ, հանքային աղեր, աղաղանյութեր և այլն
Բույսի հավաքվող մասերը	Պտուղները՝ սննդի, պտուղների, արմատների և ճյուղերի կեղևը՝ դեղագործական նպատակներով

Հավաքման ժամկետները	Պտղի հասունացումը սկսվում է սեպտեմբերի երկրորդ կեսից
Տարեկան հավաքը (կգ)	-----
Պաշարների վիճակը նախորդ տարիների համեմատ	Պաշարները բնության մեջ կարող են կրճատվել բնակմիջավայրի կորստի պատճառով
Վտանգվածության աստիճանը	Հավաքվում է բնակչության կողմից՝ օգտագործման և վաճառքի համար: Կրճատվում է բնակմիջավայրը
Պահպանության միջոցառումները	Տեսակի լայն մշակումը գյուղատնտեսությունում թույլ կտա պահպանել դրա վայրի պոպուլյացիաները և բնակչությանը մատակարարել թարմ, դիետիկ, բուժիչ, արժեքավոր պտուղ
Մշակության համապատ. վայրը	Սյունիքի և Տավուշի մարզերի ցածրադիր համայնքներում
Մշակության համառոտ տեխնոլոգիան	Ջերմասեր, չորասեր, լուսասեր, ոչ պահանջկոտ բույս է, կարող է տանել կարճատև ցրտահարություն: Հարմարվում է զանազան տիպի հողերում, սակայն պահանջում է լավ դրենաժ: Բազմացվում է սերմերով (կարելի է օգտագործել թարմ սերմերը), պատվաստով և կտրոններով (կտրոնները վերցնում են միամյա ճյուղերից), երբեմն՝ արմատային մացառներով
Տեսակի ընտրության հիմնավորումը	Չնայած սննդային, դեղագործական և տնտեսական բարձր հատկություններին, բնակչության կողմից սահմանափակ է մշակվում
Դիտողություններ	

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ղազարյան Ռ.Ս. 1981: Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն բառարան // Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1981:

Ծատուրյան Թ.Գ., Գևորգյան Մ.Լ. Հայաստանի ուտելի վայրի բույսերը // Երևան, “Լուսակն”, 2007:

Հայաստանի բույսերի Կարմիր գիրք, Երևան, 2010:

Ղանդիլյան Ա.Պ., Բարսեղյան Ա.Ս. Հայաստանի վայրի ուտելի և համեմունքային բանջարաբույսերի գենոֆոնդը. Երևան, 1999:

Тахтаджян А.Л., Федоров Ан.А. Флора Еревана. Ленинград. 1972.

Флора Армении. 1954-2009. Отв. ред. А.Л. Такхтаджян, Т. 1-11.

Флора СССР. 1934-1960. Т. 1-30.

Черепанов С. К. Сосудистые растения России и сопредельных государств (в пределах бывшего СССР). С.-Петербург, 1995.